

ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
2019Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ
Տարեկան զեկույց



Տարեկան զեկույց. ԼԳՏՏ անձանց մարդու իրավունքների
իրավիճակը Հայաստանում 2019թ. ընթացքում

Կազմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն՝
ԻԼԳԱ-Եվրոպայի աջակցությամբ (մայիս, 2020թ.)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Փինք կամ Փինք Արմենիա) իրականացնում է ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպանություն՝ ինչպես իրավաբանական և փաստաբանական աջակցության տրամադրման, այնպես էլ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունից ու ատելության հիմքով հանցագործություններից պաշտպանության արդյունավետ օրենսդրական մեխանիզմների ջատագովության միջոցով:

Սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությամբ պայմանավորված իրավախախտումների փաստագրման, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների կամ այլ հանրային օրակարգերի շուրջ ծավալվող քննարկումների և զարգացումների մշտադիտարկման հիման վրա Փինքի կողմից յուրաքանչյուր տարի ներկայացվում է ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ զեկույց:

Ըստ այդմ, զեկույցը բաղկացած է երեք հիմնական բաժնից:

Առաջին մասում ամփոփված են տարվա ընթացքում կազմակերպության կողմից արձանագրված իրավախախտումների փաստերը և դրանց իրավական մեկնաբանությունները: Այսպիսով, 2019թ-ի ընթացքում արձանագրվել է սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կատարված 37 իրավախախտում: Ոտնահարվել են տուժածների մեկ կամ միաժամանակ մի քանի իրավունքներ, ինչպես օրինակ՝ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից գերծ լինելու իրավունքը, մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, ներառյալ՝ անձնական կյանքի գաղտնիությունը և ֆիզիկական անձեռնմխելիությունը, աշխատանքի ազատ ընտրության իրավունքը: Տուժած անձանցից միայն 16-ն է ցանկություն հայտնել դիմելու իրավական պաշտպանության մեխանիզմների, ևս 2 գործով իրավապահներին է դիմել Փինքը: Ներկայացված դիմումներից միայն 5-ի հիման վրա է քրեական գործ հարուցվել, մյուս դեպքերում դիմումներին ընթացք չի տրվել տարբեր պատճառներով՝ հանցակազմի բացակայության, հանցավորին չհայտնաբերելու, տուժածի կողմից դիմումը հետ վերցնելու հիմքերով: Հարուցված քրեական գործերից ոչ մեկի քննության առարկա չի դարձվել իրավախախտման շարժառիթը, այն է՝ անձի սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ/արտահայտմամբ պայմանավորված լինելը:

Զեկույցի երկրորդ մասում տեղ են գտել պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից ԼԳԲՏ անձանց թիրախավորող գնահատականներն ու արտահայտությունները և դրանց տրվել է իրավական մեկնաբանություն: Մասնավորապես, ներկայացված են պետական պաշտոնատար անձանց կողմից հնչած ատելություն, անհանդուրժողականություն, խտրականության և բռնության կոչեր պարունակող խոսքը, ինչպես նաև իշխանության ներկայացուցիչների կողմից տրված այլ գնահատականներ: Անդրադարձ է կատարվել նաև որոշ օրենսդրական նախաձեռնությունների, որոնք ըստ էության ունեն խտրական բնույթ: Հարկ է նշել, որ այսպիսի նախաձեռնությունների սկիզբը դրվել է դեռ 2018թ-ին՝ թավշյա հեղափոխությունից հետո, և հետևողականորեն մերժվել է գործող իշխանությունների կողմից:

Արձանագրված խնդիրների հիման վրա գեկույցի երրորդ մասում ներկայացված են պետական մարմիններին, զանգվածային լրատվության միջոցներին և մարդու իրավունքների պաշտպանին ուղղված առաջարկներ:

Փինքի իրավաբանական խմբի կողմից վարվող ռազմավարական դատավարությունների* քննությունը դեռ շարունակվում է ինչպես ներպետական ատյաններում, այնպես էլ մարդու իրավունքների եվրոպական դատարանում (այսուհետ՝ ՄԻԵԴ):

2019թ-ի մայիսի 17-ին ՄԻԵԴ-ի կողմից կոմունիկացվել են «Օգանեզովան ընդդեմ Հայաստանի» երկու դիմումները: Դրանք, մասնավորապես, վերաբերում են 2012թ-ին «Դի Այ Ուայ» ակումբի պայթեցմանը և դրան հաջորդած հետապնդումներին՝ պայմանավորված ակումբի տիրոջ նույնասեռական լինելու հանգամանքով: Դեպքը, բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննության չարժանանալով, նպաստեց ատելության հիմքով հանցագործությունների անպատժելիության մթնոլորտի խորացմանը: Ավելին, հանցանքը գործած երիտասարդներն աջակցություն ստացան Հայ հեղափոխական դաշակցություն (այսուհետ՝ ՀՅԴ) և Հայաստանի հանրապետական (այսուհետ՝ ՀՀԿ) կուսակցությունների պատգամավորների կողմից: Աժ պատգամավոր Արծվիկ Մինասյանն ու Աժ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովը հրապարակայնորեն արդարացրին նրանց արարքը՝ խորացնելով անհանդուրժողականության ալիքը: Եվրոպական դատարանը, հետևաբար, սույն գործի շրջանակներում կանդիդատնա Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների ոչ ամբողջական օրենսդրական կարգավորումների և ոչ արդյունավետ քննության խնդիրն:

ՄԻԵԴ-ում դեռ շարունակվում է նաև «Մինասյանը և այլոք ընդդեմ Հայաստանի» գործի քննությունը՝ կապված 2014թ. «Իրավունք» թերթում հրապարակված «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամուլ լոբբինգի շահերը» հոդվածի տպագրման հետ, որում ներկայացված էր անձանց սև ցուցակ, ում նկատմամբ հեղինակը հորդորում է խտրականություն դրսևորել:

2018թ-ին Վարչական դատարանում Երևանի քաղաքապետարանի դեմ Փինքի ներկայացրած հայցի հիման վրա քննվող գործի ակնհայտ անհիմն և չպատճառաբանված կարճման մասին որոշումը բողոքարկվել է վերաքննիչ վարչական դատարան: Մշակույթի նախարարության դեմ բերված հայցի մերժման մասին որոշումը նույնպես բողոքարկվել է վերաքննության կարգով: Հիշեցնենք, որ 2017թ-ին Փինքի և «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագրի հիման վրա «Դու ուզու՞մ ես որ բոլորը երջանիկ լինեն. Ուրեմն մաղթիր մեզ երջանկություն» և «Տրանս անձինք մեր հասարակության մասն են» խորագրերը կրող և հանդուրժողականություն սերմանելու նպատակ հետապնդող սոցիալական գովազդները տեղադրվել էին Երևանի կենտրոնում և երկու օր անց հեռացվել՝ Երևանի քաղաքապետարանի պահանջով: Նույն գովազդները սոցիալական ճանաչելու վերաբերյալ դիմումը մերժվել էր Մշակույթի նախարարության կողմից:

2018թ-ին Սյունիքի Շուռնուխ գյուղում ԼԳԲՏ անձանց և ակտիվիստների նկատմամբ տեղի ունեցած հարձակման առիթով հարուցված քրեական գործի քննությունը ևս դեռ ընթացքի մեջ է: Հարկ է նշել, որ համաներման կիրառման հիմքով գործի կարճման մասին նախաքննություն իրականացնող մարմնի որոշումը վերացվեց դատարանի կողմից:

* Ռազմավարական նշանակություն ունեցող այս գործերի բովանդակությունը առավել մանրամասն նկարագրված է Հավելված 1-ում:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու իրավունքների և ազատությունների անխոչընդոտ իրացման և յուրաքանչյուրի համար երկրում ապահով, հավասար միջավայր ստեղծելու համար պետությունն ստանձնել է որոշակի պարտավորություններ:

Այդ պարտավորությունների ձախողումը ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում է մարդու իրավունքների խախտման:

Պետությունը նախ և առաջ պարտավոր է հարգել մարդու իրավունքները, ձեռնպահ մնալ դրանց իրացման նկատմամբ ոչ իրավաչափ միջամտություններից: Այս պարտավորությունը ներառում է նաև հարգանք այն ջանքերի նկատմամբ, որոնք անձը գործադրում է իր՝ մարդու իրավունքների իրականացման նպատակով: Պետությունը չպետք է թույլ տա մարդու իրավունքների և ազատությունների նկատմամբ ուղղակի կամ անուղղակի այնպիսի միջամտություն, որը մարդու տվյալ իրավունքների թույլատրելի սահմանափակումների սահմաններից դուրս է:

Պետության հաջորդ պարտավորությունն է պաշտպանել մարդու իրավունքները, ինչը ենթադրում է պետության կողմից մարդուն ցանկացած այլ անձի կողմից դրսևորվող ոտնձգություններից պաշտպանելը: Այս պարտավորության շրջանակներում պետությունը պետք է արդյունավետ և գործուն իրավական պաշտպանության մեխանիզմների միջոցով իրականացնի իրավախախտման ցանկացած դեպքի քննություն, իրավախախտներին ենթարկի պատասխանատվության, իսկ իրավախախտումների գոհերին ապահովի պատշաճ փոխհատուցմամբ:

Ի վերջո պետությունը պարտավոր է ապահովել մարդու իրավունքների իրացման միջավայր: Սա նշանակում է, որ պետությունը պետք է կատարի օրենսդրական, վարչական, բյուջետային, դատական այնպիսի քայլեր, որոնք բավարար պայմաններ կստեղծեն մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար: Սա ներառում է պետության պարտավորությունը՝ ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի մշակույթ կսերմանեն հասարակության շրջանում՝ երկրում ձևավորելով յուրաքանչյուրի համար հավասար և ապահով միջավայր:

Պետությունը մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և դրանք իրացնելու համար պայմաններ ապահովելու իր պարտականությունները կատարում է իր տարածքային իրավասության սահմաններում: Սա նշանակում է, որ պետությունը պատասխանատու է իր տարածքում գտնվող յուրաքանչյուր մարդու իրավունքների պաշտպանվածության համար՝ անկախ քաղաքացիությունից կամ այլ կարգավիճակից:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ՉԵՐԾ ՄԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիժներն արգելվում են:
3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Հոդված 26 մաս 1, ՀՀ Սահմանադրություն[1]

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն:[2]

Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման:[3] Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները, ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը:[4] Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ,[5] իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ:[6] Երբ անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը բավարար ծանրության չի հասել կամ չի հետապնդել խոշտանգման սահմանմամբ նախատեսված նպատակ, ապա խոսքը գնում է անմարդկային վերաբերմունքի մասին: Որոշ

դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք է համարվում:[7] Այս դեպքերում անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար:[8]

Խտրականությամբ պայմանավորված անմարդկային վերաբերմունք գինված ուժերում

Դեպք 1.1

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում, իմանալով անձի նույնասեռական կողմնորոշման մասին, նրան պահել են մյուս զին-ծառայողներից մեկուսացված, այնպիսի տարածքում, որտեղ հնարավոր չէր ապահովել տարրական կենսապայմանները: Մասնավորապես, նա պահվել է քանդված պատերով սենյակում, առանց անկողնային հարմարանքների, կերակուրը տվել են մեկուսացված, ոչ ընդհանուր ճաշարանում: Պատճառաբանել են, որ նման մոտեցման նպատակը անձի անվտանգությունն ապահովելն է: Որոշ ժամանակ անց զինծառայողին տեղափոխել են այլ զորամաս:

Անմարդկային վերաբերմունք նույնասեռական անձի նկատմամբ՝ իր ծանոթների կողմից

Դեպք 1.2

Անձի 2 ծանոթները նրան կանչել են Փակ շուկայի տարածք, բարձրացել շենքի տանիք: Սպառնացել են, որ եթե նա իր մազերը չկտրի, կզանգեն այլ անձանց, ովքեր կզան և իրեն ծեծի կենթարկեն: Այնուհետև ծանոթներից մեկը հանել է մկրատը և փորձել կտրել նրա մազերը: Անձը հայտնել է, որ անձամբ կկտրի իր մազերը, վերցրել է մկրատը և կտրել: Այնուհետև 2 ծանոթները նվաստացնող խոսքեր են ասել նրան, հայտնել, որ նա ոչ ոքի պետք չէ, դրդել են ցած նետվել տանիքից: Նրա մոտից վերցրել են գումար:

Նույն օրը անձին իր 3 ծանոթները (այդ թվում՝ նախորդ դեպքի մասնակիցներից մեկը) ստիպել են իրենց հետ զնալ սրճարան, կրկին նվաստացնող խոսքեր են ասել, վերցրել նրա հեռախոսը և պլանշետը, ստիպել կողազերծել, պլանշետի միջից իրենց անձնական հեռախոսներով լուսանկարել դիմողի նկարները, որտեղ նա հակառակ սեռին բնորոշ կերպարով է: Այնուհետև կրկին նրան հակել են կյանքը վերջ տալու մտքերի, ստիպել գրություն թողնել ծնողներին, որ նման որոշում ինքնուրույն է կայացրել: Սակայն հետո պատռել են գրությունը:

Դեպքից հետո դիմողը քայլել է դեպի Կիևյան կամուրջ, փորձել ցած նետվել, սակայն նրան նվաստացնող անձանցից մեկը մոտեցել է, հետ պահել նրան՝ ասելով, որ գոնե այդ օրը վերջ չտա կյանքին:

Մի քանի օր անց պարզվել է, որ անձի հեռախոսից վերցված լուսանկարները տարածվել են իր դասընկերների շրջանում: Դասընկերները հայիոյանքներ են հնչեցրել իր հասցեին, այնուհետև պահանջել իր հեռացումը:

Տուժողը չի ցանկացել հանցագործության մասին հաղորդում ներկայացնել, քանի որ վախեցել է, որ դա կարող է բացասաբար անդրադառնալ ուսումնական հաստատության տնօրինության հետ իր հարաբերությունների վրա, մասնավորապես՝ իրեն կարող են հեռացնել ուսումնարանից:

Հարկ է նկատել, որ նկարագրված իրավիճակներից մեկում մարդու իրավունքները խախտվել են ուղղակիորեն պետական մարմնի կողմից, երբ անձը գտնվել է պետական փակ հաստատությունում: Չինված ուժերում նույնասեռական անձանց նկատմամբ նվաստացուցիչ, անմարդկային վերաբերմունքի մասին բարձրաձայնվել է նաև նախորդ տարիներին հրապարակված զեկույցներում: Փինքի ներկայացուցիչները նաև փորձել են կապ հաստատել ՀՀ Պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի հետ՝ քննարկելու համար առկա իրավիճակը և հնարավոր լուծման ուղիները: Կենտրոնի ներկայացուցիչը, սակայն, պնդել է, որ իրենք կարող են լուծում տալ միայն այնպիսի դեպքերում, երբ տուժողի անուն ազգանունը իրենց հայտնի կլինի: Մինևույն ժամանակ, գինձառայողները, որոնք շարունակում են ծառայություն իրականացնել, խուսափում են հայտնել իրենց անձնական տվյալները՝ վախենալով հետագա ճնշումներից: Բացի այդ, խնդիրը համակարգային և խորը լուծման կարիք ունի, ինչը ենթադրում է իրավիճակի բազմակողմանի ուսումնասիրություն:

Մյուս իրավիճակը ևս նոր չէ հայաստանյան իրականությունում: Տարիներ շարունակ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ծաղրն ու ճնշումները հասակակիցների կողմից դրսևորվել են ոչ միայն դպրոցներում, այլ նաև փողոցում: Սակայն, մինչ օրս որևէ անձ պատասխանատվության չի ենթարկվել անձի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված նվաստացումների, ճնշումների, ինքնասպանության հակելու կամ հասցնելու համար: Անպատժելիության նման մթնոլորտում պետությունը ուղղակի պատասխանատվություն է կրում ցանկացած նման հանցագործության համար:

Չեկույցի հաջորդ բաժնում նկարագրված են անձանց նկատմամբ նմանատիպ հետապնդումների, ֆիզիկական բռնությունների այլ դեպքեր, որոնք իրենց ծանրությամբ գուցե անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք չեն համարվի, սակայն միանշանակորեն անձանց ֆիզիկական և հոգեբանական ամբողջականության խախտում են հանդիսանում:

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ, ՊԱՏՎԻ ՈՒ ԲԱՐԻ ՀԱՄԲԱԿԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

2

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:

2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն[9]

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասությունների ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը:[10] Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը[11] որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում:

«Անձնական կյանքը» լայն հասկացություն է. ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսին են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում:[12] Անձի մարմինը համարվում է իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչը:[13]

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև նախատեսում է անձի ինքնազարգացման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը, անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով միջավայր ունենալու իրավունքը:[14]

Ֆիզիկական բռնությունների կամ դրա սպառնալիքի, հետապնդումների դեպքեր

Դեպք 2.1

Չորակոչի ընթացքում անձը ներկայացել է կենտրոնական բժշկական հանձնա-

ժողովին՝ բուժզննության համար: Դիմողի բժշկական թերթիկում նշում է եղել «անձնային խանգարման հիմքով սեռական նախընտրության խանգարում» ինչը ՀՀ օրենսդրությամբ հիմք է անձին զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու համար:

Մինչ հանձնաժողովին ներկայանալը լսել է, որ սենյակում հանձնաժողովի անդամները, ուսումնասիրելով իր փաստաթղթերը, քննարկում են նրա նույնասեռական լինելու հանգամանքը՝ «հեսա գոմիկ ա գալու» և նման այլ արտահայտություններով: Նշված արտահայտությունները լսելի են եղել նաև այլ զորակոչիկների, որոնք կանգնած են եղել դռան հետևում:

Ներս մտնելուց հետո հանձնաժողովի նախագահը քամահրանքով է արտահայտվել նրա արտաքին տեսքի (հագուկապի, երկար մազերի) վերաբերյալ: Իմանալով, որ ինքը և զորակոչիկը նույն մարզից և նույն տարածաշրջանից են, սկսել է նրա և նրա ընտանիքի անդամների հասցեին սեռական բնույթի հայիոյանքներ և վիրավորանքներ հնչեցնել, սպառնացել զորակոչիկի հորը տեղեկացնել նրա սեռական կողմնորոշման մասին՝ նշելով, որ իր տարածքից «նման» մարդիկ չեն կարող լինել: Այնուհետև պահանջել է, որ զորակոչիկը մոտենա իրեն, ինչից հետո զորակոչիկի փաստաթղթերի պանակով հարվածել է նրա դեմքին, բարձրացրել ոտքը, որ ոտքով հարվածի, սակայն հանձնաժողովի անդամներից մեկը հեռացրել է զորակոչիկին սենյակից: Ամբողջ խոսակցությունը, ներառյալ՝ վիրավորանքները, լսելի են եղել դրսում կանգնած զորակոչիկներին:

ՀՀ ՊՆ Երևանի ռազմական ոստիկանության բաժինը մերժել է քրեական գործի հարուցումը՝ հանձնաժողովի նախագահի գործողություններում հանցակազմի բացակայության և ապացույցների բացակայության հիմքով: Որոշումը բողոքարկվել է գործի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, որը մերժել է բողոքը: Դիմողի իրավունքների խախտումը վերացնելու պահանջով բողոք է բերվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ստուգելու համար նախնական քննության ընթացքում կայացված որոշման օրինականությունը: Գործն այժմ գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության փուլում:

Դեպք 2.2

2019թ. հունվարին անձին զանգահարել է իր ընկերներից մեկի եղբայրը՝ ընկերոջ հեռախոսահամարով, նրա հետ հանդիպելու և խոսելու պատրվակով: Անձը հետագայում ընկերոջից տեղեկացել է, որ նրա եղբայրները և զարմիկները նպատակ ունեն հանդիպել և ծեծի ենթարկել իրեն, քանի որ իմացել են իր նույնասեռական սեռական կողմնորոշման մասին: Դրանից որոշ ժամանակ անց դիմողի հեռախոսահամարին պարբերաբար զանգեր են եկել անձանոթ հեռախոսահամարներից, որոնք, ինչպես հետագայում պարզվել է, պատկանում են դիմողի ընկերոջ եղբայրներին: Դիմողը իր ընկերոջից տեղեկացել է նաև, որ վերջինիս եղբայրները պատրաստվում են դիմողին հետևել, քանի որ գիտեն՝ որտեղ է աշխատում, ապրում և ինչով է զբաղվում: Բացի այդ՝ գիտեն դիմողի բնակության հասցեն և սպառնում են դիմողի ընտանիքի անդամներին հայտնել նրա սեռական կողմնորոշման մասին:

Դիմում է ներկայացվել ոստիկանություն՝ անձի նկատմամբ հետապնդումները

դադարեցնելու և նրա կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու նպատակով: Ոստիկանությունը մերժել է քրեական գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Դեպք 2.3

Անձը համացանցի միջոցով ծանոթացել է տղամարդու հետ, պայմանավորվել են հանդիպել: 2019թ. փետրվարին, պայմանավորված վայրին է մոտեցել անծանոթ մեքենա, որը կանգնել է պայմանավորված վայրից մի քանի մետր ավելի հեռու՝ մթության մեջ: Տուժողը մոտեցել է մեքենային, բացել դիմացի դուռը, տեսել է, որ վարորդը այլ մարդ է. ոչ այն մարդը, ում հետ պայմանավորվել էր հանդիպել: Վարորդը հրազեն է ուղղել տուժողի ուղղությամբ, պահանջել՝ նստել մեքենան:

Մեքենայի մեջ ձեռքով մի քանի անգամ հարվածել է տուժողի դեմքին, տուժողից պահանջել է դատարկել գրպանները, վերցրել է տուժողի մոտ եղած 28.000 ՀՀ դրամը: Վերցրել է տուժողի հեռախոսը, դրա միջից դուրս գրել տուժողի հարազատների և ընկերների հեռախոսահամարները, սպառնացել, որ նրանց կհայտնի տուժողի սեռական կողմնորոշման մասին: Ընթացքում նորից մի քանի անգամ հարվածել է և սեռական բնույթի հայիոյանքներ ու վիրավորանքներ է հնչեցրել տուժողի հասցեին: Տուժողից պահանջել է ևս 50.000 ՀՀ դրամ, որպեսզի տուժողի սեռական կողմնորոշման մասին չհայտնի նրա հարազատներին: Հանցավորը նաև հայտնել է, որ ոստիկան է, եղել է զինվորական, և որ շատերին է (ևույնասեռական տղաների) կանչել հանդիպման, որ նրանց «դաստիարակի»: Սպառնացել է նաև իր նույնասեռական վարքի համար տանել ոստիկանական բաժանմունք, որտեղ բոլոր ոստիկանները նրան սեռական և ֆիզիկական բռնության կենթարկեն: Հանցավորը տուժողից պահանջել է իր հետ օրալ սեռական հարաբերություն ունենալ, երբ տուժողը հրաժարվել է, ստիպել է նրան: Տեղի է ունեցել բռնի սեռական հարաբերություն, որից հետո հանցավորը թույլ է տվել տուժողին հեռանալ: Հարուցվել է քրեական գործ, գտնվում է դատաքննության փուլում:

Դեպք 2.4

Անձը քայլելիս է եղել Կարապի լճի մոտով, երբ նկատել է, որ 3 հոգի նայում են իր վրա և հայիոյում իրեն: Այնուհետև նկատել է, որ այդ նույն 3 հոգին հետևում են իրեն: Նրանք տուժողին հարցրել են. «հա՞յ ես, ապե» և տուժողի «այո» պատասխանից հետո միանգամից սկսել են նրան ծեծել: Մայթից նետել են փողոց, որտեղով երթնեկում են մեքենաները: Նրանք շարունակել են տուժողին հայիոյել և ասել, որ հայ կոչվելու իրավունք չունի, որ տղա չէ, այլ «քուրիկ» է: Բռնության արդյունքում կոտրվել է տուժողի ատամը, վնասվել դեմքը, քիթը, վերին շրթունքը: Հաղորդում է ներկայացվել ոստիկանություն, սակայն գործը կարճվել է:

Դեպք 2.5

Տուժողը իր ընկերներից մեկի հետ քայլելիս է եղել փողոցով, երբ պատահաբար հանդիպել է իր ծանոթի քրոջը և նրա երկու ընկերներին: Անցորդները վիճաբանություն են սկսել, տուժողի ծանոթի քույրը հրահրել է, որ իր ընկերները ծեծի ենթարկեն տուժողին: 2 տղամարդիկ՝ յուրաքանչյուրը մեկական անգամ հարվածել են տուժողի գլխին, ինչից տուժողը վայր է ընկել, իսկ նրանք շարունակել

են հարվածներ հասցնել տուժողի մարմնի տարբեր հատվածներին: Վնասվել է տուժողի ականջը: Այդ ընթացքում տուժողին ծեծի ենթարկող անձինք ասել են. «քո նմաններին պետք է փչացնել, գծերից գցել», իսկ տուժողի ընկերոջն ասել են. «տղա ես, թե՞ աղջիկ», «եթե աղջիկ ես, ինչի՞ ես տղայի մատոռով»: Տուժողի ծանոթի քույրը հորդորել է տուժողին հեռու մնալ իր եղբորից՝ նրան անվանելով «գոմիկ»: Տուժողը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին, քանի որ նրա մայրը գրուցել է իրավախախտների ընտանիքների հետ, և վերջիններս խոստացել են, որ նման բան այլևս չի կրկնվի:

Դեպք 2.6

Անձը ուսումնական հաստատությունից երթուղային տրանսպորտով տուն է ուղևորվել: Երթուղային տրանսպորտում 3 անձանոթ երիտասարդ տղամարդիկ նրա հասցեին վիրավորական արտահայտություններ են հնչեցրել՝ ասելով. «Էս Էն գոմիկն ա», և այլն: Երթուղայինից իջնելուց հետո երիտասարդները դանակներով վազել են անձի հետևից՝ բարձրաձայն ասելով. «քո նմաններին պետք ա վերացնենք, չենք թողնելու ապրես»: Անձը մտել է մի շենք, սպասել կես ժամ, ինչից հետո, տեսնելով, որ երիտասարդները հեռացել են շենքի մոտից, իջել, գնացել է տուն:

Հաջորդ օրը՝ առավոտյան, անձը նույն երիտասարդներին տեսել է իրենց շենքի մոտ:

Նույն երիտասարդներին տեսել է նաև իր ուսումնական հաստատության մոտ, սակայն շրջանցել է շենքն այնպես, որ իրեն չտեսնեն: Դասերը վերջանալուց հետո այդ երիտասարդները նորից վազել են նրա հետևից՝ սպառնալով վնաս պատճառել վերջինիս: Անձին հաջողվել է փախչել նրանցից: Չի ցանկացել գանգատ ներկայացնել՝ մտավախություն ունենալով, որ դա կարող է անդրադառնալ ուսումնառության վրա:

Դեպք 2.7

Տուժողը գնալիս է եղել մարզասրահ, երբ մի քանի անչափահասներ, տուժողի խոսքերով՝ 15-17 տարեկան տղաներ, նրա ուղղությամբ ճանապարհից վերցված քարեր են նետել, նրան անվանել «գոմիկ» և հետապնդել մինչև մարզասրահ: Այնուհետև, որոշ ժամանակ չեն հեռացել մարզասրահին հարող տարածքից:

Իրավախախտները արդեն հեռացած են եղել այն ժամանակ, երբ տուժողը վերջացրել է մարզումները և պատրաստվել հեռանալ, ուստի տուժողը անիմաստ է համարել հանցագործության մասին հաղորդում ներկայացնել:

Դեպք 2.8

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչի ընթացքում նույնասեռական տղամարդը հանձնաժողովի կողմից ուղղորդվել է հոգեբուժական հաստատություն: Շենքի միջանցքում 3 այլ տղաներ լուսանկարել և ծաղրել են նրան:

Բժշկական հաստատությունից տուն գնալու ճանապարհին նույն 3 անձինք հետևել են դիմողին, այնուհետև փողոցի ամառի հատվածում կանգնեցրել են նրան,

իլել ակնոցն ու պայուսակը, դանակով սպառնացել են և պահանջել հայտնել՝ արդյոք դիմողը նույնասեռական է, թե ոչ:

Հարձակումը դադարեցվել է այլ անձի միջամտությամբ:

Դեպք 2.9

Տրանսգենդեր կանայք կանացի հագուստով, կեղծամներով կանգնած են եղել Երևանի քաղաքապետարանի մոտակայքում, երբ մեքենայով նրանց են մոտեցել երկու տղամարդ: Նրանցից մեկը, մեքենայի լուսամուտն իջեցնելով, զենքի նմանվող առարկա է ուղղել տրանսգենդեր կանանց ուղղությամբ՝ ասելով. «սրանց պետք ա վերացնել»: Տրանսգենդեր կանայք պահանջել են իրենց հանգիստ թողնել և հեռացել են: Տղամարդիկ գնացել են նրանց հետևից, նրանցից մեկը մոտեցել է տրանսգենդեր կանանցից մեկին, հրել նրան և քաշել նրա կեղծամը: Տրանսգենդեր կինը զանգահարել է ոստիկանություն, ինչից հետո հանցավորները փախուստի են դիմել:

Դեպք 2.10

Տուժողները՝ 2 կին, անցնում են Բաղրամյան պողոտայով: Ազգային ժողովի դիմաց Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման դեմ արշավ իրականացնող «Կամք» նախաձեռնության անդամները՝ 3 տղամարդ, առաջարկում են միանալ ստորագրահավաքին: Տուժողները մերժում են, ինչից հետո նրանց հասցեին հնչում է սեռական բնույթի հայհոյանք: Տուժողներից մեկը հայհոյում է ի պատասխան, ինչից հետո նախաձեռնության 3 անդամները մոտենում և սկսում են հրել, հարվածներ հասցնել տուժողներին: Ոտնձգողները հայհոյանք են հնչեցնում նաև պատահական անցորդի ուղղությամբ, որը փորձում է հանդարտեցնել վիճաբանությունը: Տուժողների նկատմամբ հարձակումը նախաձեռնության ղեկավարի և դրան հարող անձանց կողմից որակվում է որպես «ԼԳԲՏ անձանց կողմից կազմակերպված սադրանք»: Նրանք շահարկում են տուժողներից մեկի արտաքինը՝ մասնավորապես վառ կարմիր մազերը:

Դեպք 2.11

Տրանսգենդեր կինը դուրս է եկել գիշերային ակումբից իր ընկերուհու հետ: Ակումբի մոտ նկատել է վիճաբանող տղամարդկանց, որոնք իր հասցեին վիրավորական արտահայտություններ են հնչեցրել: Նա հեռացել է վիճաբանության տարածքից, ինչից հետո վիճաբանող տղամարդկանց մի մասը մոտեցել է նրան: Նրանցից մեկը հետևի կողմից ձեռքով հարվածել է տուժողի դեմքին, ինչից հետո տուժողը վայր է ընկել: 4-5 տղամարդ սկսել են ոտքերով և ձեռքերով հարվածել տուժողի մարմնի տարբեր մասերին, ինչի հետևանքով նրան պատճառվել են մարմնական տարբեր վնասվածքներ, ջարդվել է քիթը: Տուժողին հարվածելու ընթացքում նրա հասցեին հնչեցրել են սեռական բնույթի հայհոյանքներ և վիրավորանքներ՝ կապված նրա սեռական կողմնորոշման հետ: Տուժողի խոսքերով՝ հանցավորներից մեկը ճանաչում էր իրեն, քանի որ տեսել էր Կոմայգու տարածքում սեռական ծառայություններ մատուցելիս:

Ղեպք 2.12

Իրավախախտը, իմանալով տրանսգենդեր կնոջ և իր ամուսնու անձնական շփման մասին, համացանցի միջոցով կապ է հաստատել տուժողի հետ, նրա հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցրել՝ կապված նրա գենդերային ինքնության հետ, սպառնացել, որ Երևանում երբ նրան տեսնեն, ծեծելու են և որ զգուշանա իրենից:



Անձնական կյանքին վերաբերող տեղեկության հանրայնացում կամ դրա սպառնալիք, վիրավորական վերաբերմունք

Ղեպք 2.13

«Ֆեյսբուք» սոցիալական կայքի կեղծ հաշվի օգտատերը սպառնացել է Լույսաստեռական անձանց, որ նրանց սեռական կողմնորոշման մասին կհայտնի նրանց ընկերներին և հարազատներին, եթե նրանցից յուրաքանչյուրը 200.000 ՀՀ դրամ չփոխանցի իր հաշվին: Հանցավորը տուժողներին ուղարկել է նրանց անձնական լուսանկարը, որից երևում է դիմողների Լույսաստեռական լինելը, սպառնացել է դա ուղարկել դիմողների ծնողներին: Տուժողները չեն ցանկացել դիմում ներկայացնել ՀՀ իրավապահ մարմիններին, քանի որ վախեցել են իրենց սեռական կողմնորոշման բացահայտումից: Հանցավորը մի քանի օր անց հրաժարվել է պահանջից:

Ղեպք 2.14

Սեռական բռնության հանցակազմով հարուցված քրեական գործում որպես տուժող հանդես եկող Լույսաստեռական անձի վերաբերյալ անձնական

տեղեկատվությունը տարածվել է գործը քննող մարմնի կողմից: Վերջինս տուժողի ծանոթին է տրամադրել նաև նրա ցուցմունքը: Այս մասին անձին հայտնել է իր ծանոթը՝ հորդորելով, որ հետ վերցնի բողոքը, քանի որ դրա պատճառով իր նույնասեռական լինելու հանգամանքը հայտնի է դարձել և իր անունը «արատավորվել է»:

Տուժողի խոսքերով՝ այդ ծանոթը իր վերաբերյալ քրեական գործի և դրա մանրամասների մասին հայտնել է նաև իր հորը:

Ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին: ՀԶԾ-ն գրությամբ հայտնել է, որ հանցակազմը բացակայում է:

Դեպք 2.15

Ֆեյսբուքյան անհայտ օգտատեր կապ է հաստատել անձի բանակային ընկերների հետ, հայտնել, որ ցանկանում է նրա մասին տեղեկություններ ստանալ՝ նրան, իր խոսքերով, «խայտառակ անելու» համար: Նույն անձը ֆեյսբուքյան տարբեր կեղծ հաշիվների Էրոտիկ բնույթի նկարներ է ուղարկել անձի ընկերներին, իբրև թե դրանք նրա նկարներն են: Անձի խոսքերով՝ ֆեյսբուքյան այդ օգտատերը իր զինվորական ծառայակիցներից է, որը զինվորական ծառայության ընթացքում տեղեկացել է իր սեռական կողմնորոշման մասին և այժմ փորձում է իր նկարները տարածելով «արատավորել իր պատիվը»:

Դեպք 2.16

Անձի սեռական կողմնորոշման վերաբերյալ իր ծանոթը հայտնել է նրա ընտանիքին և տրամադրել անձնական բնույթի լուսանկարներ, ինչի արդյունքում ընտանիքում խնդիրներ են առաջացել: Տուժողը չի դիմել իրավապահ մարմիններին, քանի որ մինչև իրավախախտումը հանցավորի հետ գտնվել է լավ հարաբերությունների մեջ:

Դեպք 2.17

Իրավախախտը տեսանկարահանել է տրանսգենդեր կանանց, հետապնդել, նրանց հասցեին վիրավորական արտահայտություններ և սպառնալիքներ հնչեցրել: Տեսանյութը հանրայնացվել է՝ «ֆեյսբուք» սոցիալական կայքի միջոցով:

Դեպք 2.18

Կիսաբաց լուսամուտներ հաղորդաշարի 02.09.2019թ. «Թեժ բաժանում» խորագրով հաղորդման ընթացքում հրապարակվել են անձի մերկ լուսանկարները, որոնք նախորդիվ տրամադրվել են նրա կնոջ կողմից:[15] Տուժողի կինը հայտնել է նաև, որ այդ լուսանկարները տրամադրել է «համասեռամուլ Արմեն» անունով անձը, ում հետ նա անձնական հարաբերությունների մեջ է գտնվել, ունեցել է սեռական հարաբերություն: Տուժողի կնոջ խոսքերով՝ այդ լուսանկարների պատճառով տուժողին նաև ազատել են աշխատանքից:

Դեպք 2.19

Տրանսագենդեր անձը անձնական հեռախոսով տեսակարահանել է Հյուսիսային պողոտայում երգող մի կնոջ: Վերջինս երգը վերջացնելուց հետո, հանրային հաղորդումներից ճանաչելով տրանսագենդեր անձին, սկսել է վիրավորել նրան՝ անվանելով սրբապիղծ, ասելով, որ «նման բաների քարոզ» չպետք է անել: Հավաքված անձինք ծափահարել են կնոջը, սպառնալիքներ հնչեցնել տրանսագենդեր անձի նկատմամբ, քաջքշել նրան: Ներկա գտնվողներից մեկը մոտեցել է տրանսագենդեր անձին և ասել է. «Եթե դու կին ես, ապացուցիր. իջեցրու կիսաշրջագետստդ»: Այնուհետև ներկաներից մեկը մոտեցել է և փորձել ոտքով հարվածել նրան: Ոստիկանությունը միջամտել է և միայն երգող կնոջը բերման ենթարկել:

Միջադեպից հետո համացանցում տարածվել են տրանսագենդեր անձի անձնական տվյալները՝ հեռախոսահամարը, անվանափոխությունից առաջ ունեցած անունը և այլն: Ոստիկանությունում գործին ընթացք չի տրվել:

Դեպք 2.20

Անձի ընկերներից մեկը տեղեկացել է տուժողի սեռական կողմնորոշման մասին, ինչից հետո գաղտնի մուտք է գործել նրա հեռախոս, ձեռք է բերել տուժողի և նրա զուգընկերուհու անձնական լուսանկարները: Հետագայում տուժողի սեռական կողմնորոշման, զուգընկերուհու հետ հարաբերությունների մասին հայտնել է տուժողի այլ ծանոթների և ընկերների: Հանդիպել է տուժողի հոր և մոր հետ, հայտնել տուժողի սեռական կողմնորոշման մասին, նրանց ուղարկել տուժողի և նրա զուգընկերուհու անձնական նկարները: Իրավախախտը տուժողի սեռական կողմնորոշման մասին հայտնել է նաև իր եղբորը, որը, իր հերթին, այդ տեղեկատվությունը տարածել է այլ անձանց շրջանում: Տուժողը չի ցանկացել զանգատ ներկայացնել, քանի որ չի ցանկացել իրավական գործընթացների մեջ ներքաշել ընտանիքի անդամներին՝ խուսափելով նրանց հետ հարաբերությունների ավելի լարումից:

Դեպք 2.21

Լեսբի կնոջ գործընկերը, սիրահարված լինելով նրան և իմանալով նրա նույնասեռական հարաբերությունների մասին, պահանջել է դադարեցնել այդ հարաբերությունները, այլապես՝ դրանց մասին կհայտնի նրա և նրա զուգընկերուհու ծնողներին:

Դեպք 2.22

Անձի նույնասեռական լինելու վերաբերյալ նրա ընկերը հայտնել է անձի ընտանիքին՝ նրա վիճակը ընտանիքում վատթարացնելու նպատակով: Անձը տուժածի ընտանիքին ցույց է տվել նաև իրենց համատեղ նկարները, որոնցում արտահայտված են նույնասեռական հարաբերություններ:

Դեպք 2.23

Նույնասեռական անձը փորձել է կանխել այլ անձի նկատմամբ բռնությունը, ինչին ի պատասխանը բռնություն գործադրողը հանրային վայրում բարձրաձայնել է նույնասեռական անձի սեռական կողմնորոշման մասին, վերջինիս հասցեին հնչեցրել վիրավորական արտահայտություններ՝ կապված սեռական կողմնորոշման հետ:

Ընտանեկան բռնության դեպքեր

Դեպք 2.24

Անձը 2018թ. դեկտեմբերին մասնակցել է ԼԳԲՏ համայնքից իր ընկերներից մեկի ծննդյան տարեդարձին, ինչից հետո հարազատները կասկածել են իր՝ նույնասեռական լինելու մասին: Դրանից հետո նրան փակել են տանը, զրկել կապի միջոցներից՝ հեռախոսից, ինտերնետից: Տուժածի տատիկը և մայրը սկսել են զանգեր կատարել տուժածի ընկերներին և հայտնել, որ ծեծի են ենթարկել տուժածին և նրան թույլ չեն տալու շփվել իր ԼԳԲՏ ընկերների հետ: Միևնույն ժամանակ հայտնել են, որ պատրաստվում են տուժածի ԼԳԲՏ ընկերների ծնողներին տեղեկացնել իրենց երեխաների սեռական կողմնորոշման մասին: Հայտնի են նաև տվյալներ առ այն մասին, որ նախորդիվ տուժածի հայրը նրան բռնության է ենթարկել այգում՝ կասկածելով, որ նա նույնասեռական է: Մասնավորապես, հայրը հարվածներ է հասցրել տուժածին, ինչից հետո նրա դեմքը սկսել է արնահոսել, այնուհետև բռնի ուժով նստեցրել է իր ավտոմեքենան և տարել անհայտ ուղղությամբ:

Դեպք 2.25

Անձի ընտանիքի անդամները տեղեկացել են իր՝ նույնասեռական լինելու մասին, ինչից հետո զրկել են կապի միջոցներից, արգելել տնից դուրս գալ, ազատ տեղաշարժը սահմանափակելու նպատակով կաշուն ժապավենի միջոցով կապել են աթոռին: Ստիպել են նաև այցելել հոգեբանի, որը փորձել է փոխել դիմողի սեռական կողմնորոշումը՝ խորհրդատվության միջոցով: Անձը չի ցանկացել բողոք ներկայացնել ընտանիքի դեմ:

Դեպք 2.26

Նույնասեռ հարաբերությունների մեջ գտնվող կինը ընտանիքում հոգեբանական բռնության է ենթարկվել հորաքրոջ կողմից: Վերջինս, իմանալով անձի նույնասեռ հարաբերությունների մասին, սպառնացել է, որ նրա զուգընկերոջ դեմ բողոք կներկայացնի ոստիկանություն, եթե նրանք չդադարեցնեն իրենց հարաբերությունները: Սպառնալիքները կրկնվել են պարբերաբար, սակայն տուժողը չի ցանկացել դիմել ոստիկանություն: Հետագայում տուժողի նույնասեռ հարաբերությունների մասին իմացել են նրա ծնողները, որոնք հեռացրել են տուժողին ՀՀ-ից, տեղափոխել ՌԴ, նրանից վերցրել են անձնագիրը, զրկել կապի միջոցներից՝ հեռախոսից, ինտերնետից, սահմանափակել ազատությունը:

Հաղորդում է ներկայացվել ՀՀ ոստիկանությանը, որը հաղորդման վերաբերյալ տեղեկացրել է ՌԴ ոստիկանության համապատասխան բաժնին: Բացի այդ՝ Փինքի անունից դիմում է ուղարկվել ՌԴ-ում ՀՀ դեսպանին՝ խնդրելով միջամտել իրավիճակին: Դեսպանին ուղարկված դիմումից հետո տուժողին և նրա ընտանիքի անդամներին կանչել են ոստիկանություն՝ գործի հանգամանքների պարզաբանման համար: Ոստիկանության կանչից հետո տուժողի նկատմամբ ճնշումները նվազել են:

Դեպք 2.27

Իրեն որպես տրանսգենդեր տղամարդ նույնականացնող անձը իր ընտանիքի անդամների ներկայությամբ դրական է արտահայտվել ԼԳԲՏ անձանց նկատմամբ, ինչը հանգեցրել է ընտանեկան վեճերի, մասնավորապես՝ տուժողին նրա հայրը, մայրը, եղբայրը ենթարկել են հոգեբանական բռնության՝ կապված իր գաղափարների հետ: Այնուհետև տուժողին ստիպել են կանացի հագուստ կրել, շպարվել և երկար մազեր ունենալ, աղբն են նետել տուժողի հագուստները: Տուժողին նաև ենթարկել են ֆիզիկական բռնության. հարվածել են, վայր ընկնելուց հետո հարվածել՝ ոտքերով:

Տուժողին զրկել են կապի միջոցներից՝ հեռախոսից, համակարգչից, թույլ չեն տվել շփվել ծանոթների հետ:

Տուժողը ճնշումների մասին պատմել է դասընկերուհուն, որն էլ տեղեկացրել է ուսուցչին: Վերջինս կանչել է տուժողի մորը և պահանջել վերջ տալ բռնություններին: Բռնությունները դադարեցվել են մի քանի օրով, սակայն դրանից հետո վերսկսել են: Մայրը նույնիսկ ֆիզիկական բռնություն է գործադրել փողոցում:

Տուժողի եղբայրը նաև սպառնացել է, որ կսպանի այն տղային, ում տուժողը սիրահարված է: Անձը չի ցանկացել դիմել ոստիկանություն, քանի որ դեռ դպրոցում է սովորում: Դիմում է ներկայացվել ոստիկանությանը, հարուցվել է քրեական գործ, սակայն տուժողը հաշտվել է ընտանիքի հետ:

Դեպք 2.28

Անձի հայրը հեռախոսի մեջ գտել է այլ երիտասարդ տղամարդկանց մերկ լուսանկարներ, ինչից հետո ծեծել է որդուն: Հաջորդ օրը նա դպրոց է գնացել կապտուկներով: Դրա մասին պատմել է դասընկերներին: Ուսուցչուհու աջակցությունն անօգուտ է եղել: Որևէ կառույց չի կարողացել աջակցություն ցուցաբերել: Պարբերաբար բռնությունների ենթարկվելուց հետո, երեխան փախել է տնից: Որոնումների արդյունքում երեխային գտել են, սակայն ոստիկանությունը, իմանալով, որ հայրը որդուն դաժան ծեծի է ենթարկում, հանձնել է հորը:

Հայրը հայտնել է, որ դադարեցնելու է որդու ուսումնառությունը դպրոցում և տնային դասեր կկազմակերպի, որից հետո իսկապես երեխան այլևս դպրոց չի հաճախել:

Դեպք 2.29

Անձի հայրը, իմանալով նրա սեռական կողմնորոշման մասին, մեկ օր փակի տակ է պահել նրան: Տուժողը փախել է, եկել կազմակերպություն, այնուհետև, կապվել

հոր հետ, հանդիպել:

Հանդիպման ընթացքում հայրը ֆիզիկական բռնություն է գործադրել տուժողի նկատմամբ. Քաջքշել է, փորձել խեղդել: Արդյունքում երկուսն էլ բերման են ենթարկվել ոստիկանության բաժանմունք:

Դեպք 2.30

Անձի հայրը, իմանալով նրա սեռական կողմնորոշման մասին, նրան ֆիզիկական բռնության է ենթարկել, վիրավորել: Այնուհետև պահանջել է կամ վերջ տալ նույնասեռ հարաբերություններին, կամ հեռանալ տնից և ինքնուրույն ապրել: Տուժողը հեռացել է տնից՝ չնայած նրան, որ չունի այլ տուն, չի աշխատում, սովորում է ԲՈՒՀ-ում, ուսման վարձավճարը տալիս են ծնողները: Տուժողը չի ցանկացել գանգատ ներկայացնել ընտանիքի անդամների դեմ:

Դեպք 2.31

Անձի մայրը կազմակերպել է նրա առևանգումը՝ նրան տանը պահելու, մեկուսացնելու, սեռական կողմնորոշումը փոխելու և սեռական ծառայություններ մատուցել թույլ չտալու համար: Առևանգումը իրականացրել են 3 անձ: Վերջիններս զանգահարել են տուժողին, ներկայացել որպես հաճախորդ, խաբեությամբ՝ նրա հետ գումարի դիմաց սեռական հարաբերություն ունենալու պատրվակով հանդիպման պայմանավորվածություն ձեռք բերել: Հանդիպման վայրից նրան բռնություն գործադրելով առևանգել են, նրա կամքին հակառակ տեղափոխել են հարակից թաղամաս ու որոշ ժամանակ պահել են մեքենայի մեջ:

Հարուցվել է քրեական գործ: Տուժողին առևանգելու համար մեղադրանք է առաջադրվել 4 անձի, այդ թվում՝ տուժողի մորը: Գործը գտնվում է դատական քննության փուլում:

Դեպք 2.32

Անձը սեռական կողմնորոշման խանգարում ախտորոշմամբ ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար: Դրա մասին իմացել են նրա ծնողները, եղբայրը, ինչից հետո նրան փակի տակ են պահել տանը շուրջ 2 ամիս, զրկել են կապի միջոցներից: Բացի այդ՝ դիմողի հասցեին պարբերաբար հնչեցրել են վիրավորական արտահայտություններ՝ նրա սեռական կողմնորոշման հետ կապված:

.....
Նկարագրված իրավախախտումներից տուժած անձինք հիմնականում խուսափում են դիմել իրավապահ մարմիններին նախ և առաջ վստահություն չունենալով նրանց նկատմամբ: Նախկինում բազմաթիվ են եղել դեպքերը, երբ գործը քննող մարմինը տարածել է տուժողի անձնական կյանքին վերաբերող տվյալներ: Վերոնշյալ դեպքերից մեկում նույնպես ականատես ենք լինում նման իրավիճակի:

Բացի այն, որ անձանց սեռական կողմնորոշմամբ կամ գեղեցիկության ինքնության պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունները պատշաճ քննու-

թյան չեն առնվում ուստիկանության և քննչական մարմնի կողմից, դրանք լրիվ և բազմակողմանի քննության ենթարկելու համար բավարար իրավական հիմքերը ևս բացակայում են: Դեպքերը քննվում են որպես հասարակ հանցագործություններ: Հաշվի չի առնվում իրավախախտի շարժառիթը այն դեպքում, երբ շարժառիթով պայմանավորված ատելության հիմքով հանցագործություններն ունեն շատ ավելի մեծ վտանգավորություն և պետք է ստանան առանձնահատուկ մոտեցում:^{*}

Արձանագրված իրավախախտումների շարքում հատկապես մեծ տեղ են զբաղեցնում անձի մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվության տարածման դեպքերը: Տարածված են նաև ֆիզիկական բռնության կամ դրա սպառնալիքի դեպքերը: Նման փաստական հանգամանքներում հետապնդման են ենթարկվել անձինք անձանոթների կողմից, որոնք սակայն, ինչ-որ պահից դադարել են հետապնդումները:

Ընտանեկան բռնության դեպքերում անձինք հրաժարվում են դիմել իրավապահ մարմիններին նախ և առաջ ելնելով այն հանգամանքից, որ իրավախախտը իրենց ընտանիքի անդամն է: Ստանձնելով մարդու իրավունքները պաշտպանելու պարտականություն՝ պետությունը պարտավորվում է ոչ միայն օրենսդրական կարգավորումներ իրականացնել, այլ նաև ձեռնարկել ավելի ընդգրկուն միջոցներ՝ բարձրացնելու համար անձանց իրազեկվածությունը և հանդուրժողականությունը: Այս միջոցների շրջանակներում պետք է բարձրացվի անձանց կրթական մակարդակը նույնաստեռականության, տրանսգենդեր ինքնության և առհասարակ սեռականության վերաբերյալ:

^{*} Իրավակարգավորումների փոփոխության նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվությունն առկա է զեկուլցի 7-րդ բաժնում:

1. *Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:*
2. *Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:*

Հոդված 57, ՀՀ Սահմանադրություն [16]

Աշխատանքի ազատ ընտրության իրավունքը սոցիալ-տնտեսական այն իրավունքներից է, որն ընկած է անձի սոցիալական ապահովության հիմքում: Այն անձին թույլ է տալիս ազատորեն ընտրել իր ապրուստի ստեղծման միջոցը և ապահովել իր բարեկեցությունը: Աշխատանքը փոխելը կամ աշխատանքից ազատվելը նույնպես պետք է լինի անձի կամքով, իսկ աշխատանքից հեռացումը՝ համապատասխան հիմնավորմամբ՝ առանց անձի որևէ հատկանիշի հիմքով խտրականության: Անձին իր դիմումի համաձայն աշխատանքից ազատման հակելը, ներառյալ՝ այնպիսի ճնշող միջավայր ստեղծելը, որ անձն իր կամքով հեռանա աշխատանքից, նույնպես համարվում է աշխատանքային իրավունքի խախտում:

Դեպք 3.1

Պետական մարմնում ղեկավարի (տնօրենի) փոփոխությունից հետո գործատունն կանչել է աշխատակիցներից մեկին, ով նույնասեռական է, և հայտնել, որ նրա գործընկերները չեն ուզում աշխատել իր հետ՝ կապված նրա սեռական կողմնորոշման հետ: Ուստի լավ կլինի, որ աշխատակիցը իր դիմումի համաձայն հեռանա աշխատանքից: Անձն աշխատանքից ազատման դիմում է ներկայացրել: Հետագայում նա չի ցանկացել դիմել դատարան՝ իր խախտված իրավունքը վերականգնելու համար:

Դեպք 3.2

Դիմողի տնօրենը և մյուս գործընկերները, տեղեկանալով նրա սեռական կողմնորոշման մասին, սկսել են նրան նվաստացուցիչ վերաբերվել՝ պարբերաբար վիրավորելով, վրան գոռալով, նույնասեռական անձանց մասին խիստ բացասական և վիրավորական բառերով արտահայտվելով, ստեղծել են հոգեճնշող մթնոլորտ, սակայն դիմողին ուղղակիորեն չեն ասել, որ տեղյակ են նրա երկսեռական (բիսեքսուալ) լինելու մասին: Դիմողի տարասեռ ամուսնությունից և երեխա ունենալուց հետո ճնշումները շատացել են՝ ընդհուպ մինչև այնպիսի և այն քանակի հանձնարարություններ են տրվել դիմողին, որոնք իրականացնելու համար առավել մեծ ջանքեր և ժամանակ է պահանջվել: Միաժամանակ շարունակվել են նվաստացումները: Դիմողի խոսքերով՝ տնօրինությունը փորձում է այնպիսի ճնշող մթնոլորտ ստեղծել, որպեսզի ինքն իր կամքով ազատվի աշխատանքից:

Վերը նկարագրված դեպքերում անձանց աշխատավայրում, իմանալով նրանց սեռական կողմնորոշման մասին, ստեղծել են այնպիսի պայմաններ, որ անձը իր կամքով՝ իր դիմումի համաձայն հեռանա աշխատանքից: Արդյունքում, իրավախախտումներից տուժած անձինք չունեն բավարար ապացույցներ իրենց աշխատանքային իրավունքի խախտման շարժառիթների վերաբերյալ, ինչը նրանց զրկել է իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից:

Խտրականության արգելքի վերաբերյալ օրենքի բացակայությունը ևս նպաստում է այնպիսի իրավիճակի ձևավորմանը, որտեղ անձը չի կարող վիճարկել իր հանդեպ խտրականության դրսևորումը՝ չունենալով բավարար ապացույցներ: Մասնավորապես, աշխատանքային իրավունքի խախտման վերաբերյալ տվյալների առկայության դեպքում անձը հնարավորություն ունի դիմել դատարան՝ ընդհանուր հիմունքներով՝ կրելով իր վկայակոչած հանգամանքների ապացուցման բեռը: Աշխատանքային իրավունքի խախտման խտրական բնույթը ևս պետք է ապացուցվի տուժողի կողմից, ինչը գործատուի հետ ի սկզբանե անհավասար պայմաններում գտնվելու պարագայում գրեթե անհնար է:

ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

4

1. Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման:
2. Միավորումների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:
3. Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:
4. Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել օրենքով՝ սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ:

Հոդված 44, ՀՀ Սահմանադրություն [17]

Միավորումը կազմակերպված, անկախ, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող մարմին է՝ ձևավորված անձանց ազատ կամարտահայտությամբ պայմանավորված անդամակցության վրա և հետապնդում է որոշակի նպատակ:

Միավորումները կարող են ունենալ տարբեր իրավաբանական կազմակերպական և կառուցվածքային ձև: Դրանց կարևորությունը հասարակական կյանքում կայանում է նրանում, որ մարդիկ հնարավորություն են ունենում իրենց դիրքորոշումն արտահայտել և ծավալել համատեղ գործունեություն՝ ուղղված որոշակի խմբի շահերի ներկայացմանը և/կամ պաշտպանությանը:

Միավորումների ազատությունը պետք է պաշտպանվի ոչ միայն ընդհանուր միջոցներով՝ մշակելով դրանց գործունեության օրենսդրական կարգավորումներ, այլ նաև պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար միավորումների անխոչընդոտ գործունեությունը: Այդ միջոցների շարքին են դասվում միավորումների նկատմամբ խտրականության բացառմանն ուղղված գործողությունները: Այսինքն, պետությունը ոչ միայն պետք է ապահովի ցանկացած անձի հնարավորությունը անդամակցել որևէ միավորման՝ անկախ իր սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, այլ նաև պետք է ստեղծի ապահով միջավայր ցանկացած խմբի շահեր ներկայացնող և ցանկացած իրավաչափ նպատակ հետապնդող միավորման անխոչընդոտ գործունեության համար:*

Դեպք 4.1

Այն շենքի բնակիչները, որտեղ գործում է կրթական ուղղվածությամբ «Ֆեմ-գրադարան» ՀԿ-ն, տեսնելով շենքում գրկախառնված և համբուրվող լեսբի զույգի՝ դիմել են Երևանի քաղաքապետին/Կենտրոն վ/շ թաղապետարան՝ հայտնելով, որ Ֆեմգրադարանը «այլասերություն է տարածում»: Դրանից հետո

ՏՄՄ աշխատակիցները հայտնել են, որ տուգանելու են ՀԿ-ին՝ ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված հիմքով, այն է, որ ՀԿ-ները չեն կարող բնակարանային տարածք վարձակալել, այլ պետք է վարձակալեն միայն հանրային նշանակության տարածք, իսկ դրանից հետո ոստիկանության միջոցով տարածքից վտարեն ՀԿ-ն: ՏՄՄ աշխատակիցները չեն թաքցրել, որ նրանց գործողությունները ունեն պատժիչ տարրեր, որ դիտավորությամբ են փորձում տուգանել հենց այդ ՀԿ-ին: ՀԿ-ի նկատմամբ մի քանի օր տևած ճնշումները դադարել են Երևանի ավագանու որոշ անդամների միջամտությունից հետո: Սակայն կազմակերպությունը ի վերջո ստիպված է եղել տեղափոխվել այդ տարածքից:

Արձանագրված դեպքում հասարակական միավորման անխոչընդոտ գործունեությունը խաթարվել է այցելուների սեռական կողմնորոշմամբ պայմանավորված: Պետական մարմնի կողմից ոչ միայն չեն ձեռնարկվել միջոցներ միավորման գործունեության համար ապահով միջավայր ստեղծելու համար, այլ նաև փորձ է արվել ուղղակիորեն խոչընդոտել դրա գործունեությանը, ինչը խորացրել է քաղաքացիների բացասական վերաբերմունքը և կազմակերպությանը դրել խոցելի դրության մեջ:

* Կանանց նկատմամբ ցանկացած տեսակի խտրականության վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի (CEDAW) 3-րդ հոդվածի պահանջի համաձայն անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր պատշաճ միջոցները՝ ներառյալ օրենսդրական, ապահովելու համար կանանց ամբողջական զարգացումն ու առաջընթացը՝ նպատակ ունենալով երաշխավորել նրանց իրավունքների և հիմնարար ազտությունների իրացումը տղամարդկանց հետ հավասարության հիմունքներով: Նույն կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն անդամ պետությունները պետք է ձեռնարկեն պատշաճ միջոցներ վերացնելու համար վերացնելու համար կանանց նկատմամբ խտրականությունը երկրի քաղաքական և հանրային կյանքում և մասնավորապես տղամարդկանց հավասար ապահովել կանանց մասնակցությունը հանրային և քաղաքական կյանքին վերաբերող հասարակական կազմակերպություններին և միավորումներին: Պեկինի Գործողությունների պլատֆորմի միջոցով պետությունները նաև պարտավորվել են հավասարապես պաշտպանել և խթանել կանանց և տղամարդկանց միավորումների ազատությունը՝ ներառյալ անամակցումը քաղաքական կուսակցություններին, առևտրային միավորումներին և այլ մասնագիտական և սոցիալական կազմակերպություններին, ինչպես նաև ընդունել քաղաքականություն, որի համաձայն կստեղծվեն ինքնօգնության խմբեր, աշխատողների կազմակերպություններ և կոոպերատիվներ՝ ոչ կոնվենցիոն աշակցության ձևաչափով և ճանաչելով միավորումների ազատությունն ու կազմակերպման իրավունքը: (Beijing Platform for Action, Chapter I of the Report of the Fourth World Conference on Women, Beijing, 4-15 September 1995, A/CONF.177/20 and Add.1, , Strategic Objectives I.2 and G.1.) Տես նաև ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ ցանկացած տեսակի խտրականության վերացման կոմիտեի No. 23. Քաղաքական և հանրային կյանք. Ընդունվել է կոմիտեի տասնվեցերորդ սեսիայի ընթացքում, 1997թ. (A/52/38) bjm

Ատելության խոսքի սահմանումը դեռևս չունի մեկ համընդհանուր կերպով ճանաչված ձևակերպում, սակայն գործնականում միջազգային մարմինների կողմից տրվել են պայմանական մեկնաբանություններ:

Ատելության խոսք կարող են համարվել արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում են ռասսայական ատելությունը, այլատյացությունը (քսենոֆոբիան), հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ արտահայտված ծայրահեղ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ (էթնոցենտրիզմով) անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների (միգրանտների) և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը:[18]

ՄԱԿ-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրի 19(2)-րդ հոդվածը ճանաչում է արտահայտման ազատությունը, հաստատելով, որ «Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, բնավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի ինֆորմացիա ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:[19]

Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել հետևյալ պայմանների առկայության դեպքում.

- ա) պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.
- բ) ուղղված լինեն այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելուն, պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանությանը,
- գ) լինեն անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում այս շահերի պաշտպանության համար: Այս պայմաններից միայն մեկի կամ երկուսի առկայությունը բավարար չէ, որպեսզի սահմանափակումը համարվի օրինական:

Դաշնագրի 20(2)-րդ հոդվածով սահմանվում է. «2. Ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության օգտին որևէ ելույթ, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, պետք է արգելվի օրենքով»:

Ատելության խոսքը դրսևորվում է ոչ միայն բռնությունների, խտրականության կոչերով կամ դրանց արդարացմամբ և ջատագովությամբ, այլ նաև՝ վիրավորական, նվաստացուցիչ, թշնամական վերաբերմունքով, անհանդուրժողականության սերմանմամբ որոշակի խմբերի նկատմամբ: Այն մի դեպքում կարող է հանգեցնել անձանց խմբերի կամ անհատների նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների, մյուս կողմից կարող է խախտել որոշակի հատկանիշներով առանձնացող անձանց հոգեբանական ամբողջականությունը՝ պատճառելով հոգեկան տառապանք կամ ճնշվածություն:

Ատելության խոսքը որոշ երկրների օրենսդրությամբ հասցեավորված է տարբեր մակարդակներում: Օրինակ Կանադայի, Իսլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Նիդերլանդների և այլ երկրների օրենսդրությամբ ատելության խոսքի համար նախատեսված է քրեական պատասխանատվություն:[20]

Ատելության խոսքի համար նախատեսված պատասխանատվությունը պայմանավորված է դրա ծանրությամբ: Ատելության խոսքի ծանրությունը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները[21]

- Համատեքստը, որում այն հնչում է,
- Դրա հեղինակը, նրա դերը, հասարակության կողմից նրա նկատմամբ վերաբերմունքն ու վստահության աստիճանը,
- Նպատակը. կարևոր է՝ արդյոք նման խոսքը հնչեցվել է դիտավորյալ՝ որոշակի հետևանք առաջացնելու նպատակով, թե անզգուշությամբ,
- Բովանդակությունը. կարևոր է, թե խոսքը որքանով է ազդեցիկ և որքանով կարող է որոշակի վնաս պատճառել,
- Տարածման միջոցները, լսարանը. կարևոր է, թե ինչ ծավալի հանրային տարածում է գտել խոսքը,
- Ռիսկայնությունը:

Այս հանգամանքների վերլուծությունից ելնելով կարող է տարանջատվել ատելության խոսքի համար պատասխանատվության աստիճանը: Այնպիսի իրավիճակում, երբ հանրության 95 տոկոսը բացասական դիրքորոշում ունի նույնասեռական և տրանսգենդեր անձանց նկատմամբ, ատելության խոսքի նույնիսկ ամենաանվնաս թվացող դրսևորումը կարող է խորացնել հասարակության բևեռացումն ու հանգեցնել իրավախախտումների: Այն դեպքում, երբ ատելության խոսքի հեղինակը պետական պաշտոնատար անձ է, դրա վտանգավորության աստիճանն առավել բարձր է ոչ միայն պաշտոնյայի վայելած հեղինակության բերումով, այլ նաև՝ պայմանավորված անպատժելիության մթնոլորտի ձևավորմամբ:

Անզգուշաբար հնչած ատելության խոսքը, պետք է արժանանա քննադատության և որոշ դեպքերում նույնիսկ պատասխանատվության հանգեցնի, սակայն այս դեպքում քրեական պատասխանատվությունը պարտադիր չէ: Խոսքի բովանդակության վերլուծությունը հատկապես կարևոր է գնահատելու համար դրա հետևանքները. այն կարող է անձանց որոշակի խմբի պահել վախի մթնոլորտի և հոգեբանական ճնշված իրավիճակում՝ անընդհատ սպառնալիքի ներքո: Ատելության խոսքի հասանելիությունը հանրությանը պայմանավորված է ինչպես այն հանգամանքով, թե որտեղ է այն հնչել, այնպես էլ նրանով, թե արդյոք այն տարածվել է զանգվածային լրատվության միջոցներով, թե ոչ: ՉԼՄ-ների կողմից նման խոսքի տարածումը ևս պետք է ստանա իրավական գնահատական: Ի վերջո ատելության խոսքը պետք է լինի իրական և հստակ. դրա ոչ միանշանակ ընկալումը նվազեցնում է վտանգավորության աստիճանը:

2019թ-ի ընթացքում երկրում առավել տարածված ատելության խոսքն ուղղված է եղել նույնասեռական և տրանսգենդեր անձանց, նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվողներին և նրանց համակիրներին:* Ստորև

* Հայաստանի Հելսինկյան կոմիտե. «Ատելության խոսքի մշտադիտարկում. Պիլոտային գեկույց».
Էջ 6. <https://bit.ly/2xwthgG>

ներկայացված են առավել ցայտուն և վտանգավոր դրսևորումները:

Լիլիթ Մարտիրոսյանի ելույթը Ազգային ժողովում

05.04.2018թ. ՀՀ Ազգային ժողովի «Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի» մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ Ազգային ժողովում կայացել են Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների Համընդհանուր պարբերական դիտարկման վերաբերյալ հանրային լսումներ, որին մասնակցել են ինչպես ՀՀ ԱԺ, Կառավարության, ՄԱԿ-ի, Եվրամիության ներկայացուցիչներ և դեսպաններ, այնպես էլ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Քննարկման ընթացքում օրակարգով նախատեսված ելույթների շրջանակում սահմանված կարգի համաձայն՝ գրանցվելուց հետո ելույթ է ունեցել «Իրավունքի կողմ» ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, որը ներկայացել է որպես տրանսգենդեր կին և բարձրաձայնել տրանսգենդեր անձանց նկատմամբ վերջիններիս գենդերային ինքնության հիմքով տեղի ունեցող հանցագործությունների խնդիրը:



Ելույթի ավարտից հետո նիստը նախագահող «Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի» մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Չոիրաբյանը հայտարարել է հետևյալը.

«Ես պետք է օգտվեմ նախագահողի իմ իրավունքից և նշեմ, որ այն, մենք ունեինք այսօր երեք թեմա քննարկելու. դատաիրավական բարեփոխումներ, հաշմանդամների խնդիրներ և երեխաների խնդիրներ, և օգտվել առիթից և փորձել այս ամբիոնից բարձրացնել հարց, որն այս պահին չկա մեր օրակարգում... Ես սա համարում եմ անհարգալից վերաբերմունք՝ առաջին հերթին իմ հանդեպ որպես հանձնաժողովի նախագահ, երկրորդ հերթին՝ անհարգալից վերաբեր-

մուկը խորհրդարանի հանդեպ: Ձեր իրավունքները որևէ մեկը չի ոտնահարում, բայց մենք ունենք հստակ օրակարգ և դուք խախտել եք մեր օրակարգը: Ես սա համարում եմ ուղղակի անհարգալից հանձնաժողովի՝ մարդու իրավունքների պաշտպանության, և մեր հայտարարած օրակարգի հանդեպ: Չի՛ կարելի խախտել օրակարգը, սա հստակ օրակարգ էր սահմանված: Ո՛չ, խտրական վերաբերմունքի խնդիր չկա, երբ որ խնդիրը կվերաբերվեր ձեզ, կիրավորեինք՝ կխոսեիք: Մենք ունեինք այստեղ հստակ օրակարգ, դուք խախտել եք օրակարգը. խնդրում եմ, ազատե՛ք դահլիճը»:[22]

Լսումների ավարտից հետո Նաիրա Չոհրաբյանը հյուրընկալվել է «1in.am» լրատվամիջոցի եթերում «Նվեր Մնացականյանի հետ» հաղորդմանը և հարցազրույցի ընթացքում նշել է, որ ինքը այնպիսի շոկ է ապրել տեսնելով, որ Լիլիթ Մարտիրոսյանը մոտենում է ամբիոնին, որ անգամ չի հիշում, թե ինչի մասին է խոսել:[23]

Այս կապակցությամբ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Որպես Ծառուկյան, որպես «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ղեկավար, որպես հայ ընտանիքի հայր, աղաթով, ավանդույթով, դաստիարակությամբ, հավատքով, եկեղեցիով, դա մեր համար անընդունելի է և ոնց որ միշտ եղել է ասենք թե դա արատ է: Արատը միշտ պետք է ոնց որ եղել թաքուն պահել, թաքուն պետք է պահել: Մենք երբեք ու երբեք հնարավորություն չենք տալու, թույլ չենք տալու դա տարածվելու կամ օրինական ուժ ստանալու: Ոնց որ եղել ա, օրենքը գործում ա, որ մարդու իրավունքները բոլորն էլ իրավունք ունեն իրենց անձնականը մինչև այսօր ինչ-որ ընդունվել ա»:

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«...Ես ամեն գնով օրենքի շրջանակներում պայքարելու եմ սեռաշեղվածների և քայքայիչ աղանդների գաղափարների տարածման դեմ...

Եթե անգամ ինձ ոչ ոք չսատարի կամ քչերը սատարեն, այս պայքարի մեկնարկը համարեք տրված՝ ցանկացած վերջաբանի ակնկալիքով...»

Նույն խմբակցության պատգամավոր Վարդան Ղուկասյանը արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

« Խայտառակություն է Հայաստանի Հանրապետության թիվ մեկ քաղաքական ամբիոնը տրամադրել նման մարդկանց:

...

Ո՛չ, բոլոր մարդիկ հավասար իրավունքներ չունեն, դա Եվրոպայում է: Իսկ Հայաստանում մեր ավանդականն ավելի կարևոր է, քան այդ ամեն ինչը: Այդպիսիներին ընդհանրապես, ինչքան ես հիշում եմ, դրանց տեղ չեն տվել: Հիմա եթե ուզում եք Եվրոպական այդ բարքերը բերել Հայաստան, չարաչար սխալվում եք: Մեծամասնությունը դրան դեմ է: Այլասերված վարքուբարքովները թող գևան՝ Հոլանդիայում ապրեն, ոչ թե Հայաստանի Հանրապետությունում:

...

Էզը Էզ է, որձը որձ է. Հիմա Էզն ու որձը խառնել են իրար. Հասկացանք, Եվրոպա, Եվրոպա»:[24]

Տրանսպերենտ անձի ելույթից հետո Ազգային ժողովի մտք բողոքի ակցիա իրականացնող անձանց հետ հավաքի ընթացքում, խոսելով Տեր Ղազար քահանա Պետրոսյանի հետ, վերջինիս ներկայացրած պահանջին առ այն, որ Նույնասեռականությունը պետք է քրեորեն պատժելի լինի և որպես պատիժ պետք է նախատեսված լինի չորս տարվա ազատազրկում, Վարդան Ղուկասյանն ասել է. «Չորս տարին քիչ է. հրապարակում այրել է պետք»:[25]

Այս հայտարարությունները պարունակում են վիրավորական, արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ, ինչպես նաև՝ բռնության կոչ: Խոսքի հասանելիությունը հասարակության որոշ խմբերի, ինչպես նաև դրա ազդեցությունը՝ որպես ատելության շարժառիթով պայմանավորված հանցագործությունների խթան գնահատելիս, հարկավոր է անդրադառնալ արտահայտությունների հեղինակների դերին և դրանց տարածման միջոցին: Լինելով Ազգային ժողովի քանակով երկրորդ խմբակցության պատգամավորներ՝ վերոնշյալ մեջբերումների հեղինակները ունեն բավականին մեծ լսարան, հետևաբար նրանց հնչեցրած խոսքի վտանգավորության աստիճանը դիտվում է ավելի բարձր: Ավելին, ներկայանալով որպես ժողովրդի քվեն ստացած և նրանց ձայնը երկրի օրենսդիր մարմնում ներկայացնող անձինք՝ նրանք իրենց խոսքով ձևավորում են իրենց ընտրազանգվածի դիրքորոշման որոշակի ընկալում, ինչը կարող է թյուրիմացաբար ազդել նաև ավելի լայն խմբերի մոտեցումների վրա: Այնուամենայնիվ, քանի որ ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավական ուժ և ցանկացած իրավական ակտ պետք է համապատասխանի Սահմանադրությանը, օրենսդիր մարմինը ոչ միայն պետք է զերծ մնա հակասահմանադրական օրենսդրական ակտերի ընդունումից, այլ նաև պետք է խրախուսի Սահմանադրությամբ ճանաչված իրավունքների իրացումն ապահովող արդյունավետ երաշխիքների ստեղծումը:

Վերոնշյալ հայտարարությունների կապակցությամբ ԱԺ նախագահին ներկայացվել է դիմում՝ Էթիկայի ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու և պատգամավորների արտահայտած դիրքորոշումները քննության առնելու պահանջով: Ազգային ժողովից մինչ օրս պատասխան չի ստացվել: Վարդան Ղուկասյանի արտահայտությունների վերաբերյալ դիմում է ներկայացվել ՀՀ ոստիկանությանը՝ դրանց համապատասխան իրավական որակում տալու և քրեական գործ հարուցելու պահանջով, սակայն քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Այդ ընթացքում ԱԺ տարածքում անցկացվող հավաքներին մասնակցող անձանցից մեկը տեսախցիկների ներկայությամբ ցուցադրել է իր պայուսակում պահվող կենցաղային դանակը և Նույնասեռական անձանց նկատի ունենալով՝ տեղեկացրել նրանց վնասելու իր մտադրության մասին:[26] Նույն մտադրությունը շեշտել է նաև մեկ այլ հարցազրույցի ընթացքում: Այս առիթով հաղորդում է ներկայացվել ոստիկանություն, սակայն քրեական հետապնդում չի իրականացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Վարչապետի հրապարակային անդրադարձը իրավիճակին

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պատասխանելով լրագրողների հարցին, հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «Դա Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նիստ էր: Հիմա բոլորը թող պատասխանեն՝ հանրապետականները, բարգավաճականները, հոգևորականները, պահպանողականները՝ Լիլիթ Մարտիրոսյանը մարդ է՞, թե՞ մարդ չէ, եկեք սկսենք այս եզրույթից: Երկրորդն՝ այն պահվածքը, որը ցուցաբերում է Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահը, դա ընդհանրապես կասկածի տակ է դնում մարդու իրավունքների վիճակը, և այս պրովոկացիայի կազմակերպման արդյունքում, կարծում եմ, որ ԲՀԿ-ն պետք է մտածի՝ ընդհանրապես Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովում իրենց ներկայացրած հանձնաժողովի նախագահն արդյոք Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահ է և ինքը համապատասխանում է Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահ լինելու համար անհրաժեշտ նվազագույն չափանիշներին»:[27]

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը անդրադարձել է տրանսգենդեր ծանրամարտիկ Մել Դալուզյանի կյանքին վերաբերող «Մել» փաստավավերագրական ֆիլմը մասամբ ՀՀ Մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորվելու առթիվ բարձրացած աղմուկին:

Նա մասնավորապես նշել է. «Ծիշտ է, ես տեղյակ չեմ եղել, բայց ես շատ գոհ եմ, որ այդ ֆիլմը ֆինանսավորվել է, որովհետև մեր պատկերացրած Հայաստանի բարոյահոգեբանական դիմանկարն այդպիսին չէ»:[28]


ԱՍՈՑԱՅՎԱԾ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

6

2019թ-ի ընթացքում տարբեր առիթներով փորձ է արվել շահարկել ԼԳԲՏ անձանց հետ կապված հարցերը՝ կառավարությանը հրահրելով դիրքորոշում արտահայտել և իրավական կարգավորումներ ներդնել՝ սահմանափակելու համար ԼԳԲՏ անձանց և իրավապաշտպանների գործունեությունը: ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպանությամբ ուղղակիորեն չգբաղվող անձանց և կազմակերպությունների գործունեությունը կապվել է նույնասեռականության «քարոզչության» հետ, նրանց հասցեին հնչել են մեղադրանքներ «այլասերվածություն քարոզելու» վերաբերյալ: Մասնավորապես, խոչընդոտվել է նրանց գործունեությունը, հնչել են հանրային վիրավորանքներ, սպառնալիքներ:

«Իմ մարմինն անձնական է» գրքի շնորհանդես

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը կազմակերպել է ծնողներին և երեխաներին սեռական բռնության վերաբերյալ իրազեկելու նպատակ հետապնդող «Իմ մարմինն անձնական է» գրքի շնորհանդեսը, որի ընթացքում, ըստ տարբեր տվյալների, մոտ 10-25 անձինք ներկա են գտնվել և խանգարել են գրքի շնորհանդեսը, այնուհետև նրանց են միացել մի խումբ տղամարդիկ և վանկարկել «Ամո՞թ, ամո՞թ, դուք այլասերություն և անբարոյականություն եք քարոզում...» և այլն:[29] Դրան հաջորդել են վիրավորանքներն ու ատելության խոսքը առցանց՝ «Ֆեյսբուք» սոցիալական կայքում և լրատվամիջոցներում: Որպես նեյրոփիրաբույժ, սեքսուոլոգ և այլ մասնագետ ներկայացող որոշ անձինք քննադատել են գիրքը՝ այն ներկայացնելով որպես մանկապղծություն և նույնասեռականություն քարոզող:



Ստամբուլյան կոնվենցիայի վավերացում

Կանանց նկատմամբ բռնությունների դեմ Ստամբուլյան կոնվենցիան արդեն ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կողմից. սպասվում է դրա վավերացումը: Որոշ խմբերի կողմից 2019թ-ին մեկնարկեց կոնվենցիայի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող լուրերի տարածումն ու դրա դեմ բողոքի ակցիաների կազմակերպումը: Կոնվենցիան, մասնավորապես, ներկայացվեց որպես նույնասեռականների պաշտպանության կոնվենցիա, որը նպատակ ունի «երրորդ սեռ մտցնել» բացի արական և իգական սեռերից, թույլատրել նույնասեռական զույգերի ամուսնությունն ու նրանց կողմից երեխաներ որդեգրելը: Նման դիրքորոշում են արտահայտել նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Չոհրաբյանը, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի արդարադատության նախկին նախարար Գևորգ Դանիելյանը և այլ անձինք, որոնք Ստամբուլյան կոնվենցիան համարել են հակասահմանադրական: Արա Չոհրաբյանը առցանց ստորագրահավաք կազմակերպեց:[30]

Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման վերաբերյալ քննարկումների ընթացքում ԱԺ-ին հարող տարածքում բողոքի ցույցեր է կազմակերպել «Կամք» հասարակական կազմակերպությունը՝ հիմնավորելով, որ պետք է թույլ չտալ «հակահայկական», «ապագային» փաստաթղթի վավերացումը: Ամիսներ շարունակ իրականացվեց ստորագրահավաք կոնվենցիայի վավերացման դեմ հանրությանը մոլորեցնելով, թե կոնվենցիան նպատակ ունի թույլատրել նույնասեռական անձանց ամուսնությունն ու երեխաների որդեգրումը: Ստորագրահավաքին միացան նաև մի շարք պատգամավորներ ինչպես իշխող «Իմ քայլը» խմբակցությունից, այնպես էլ «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունից: Միացող պատգամավորներից Գևորգ Պետրոսյանը նաև նշեց, որ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը ևս դեմ է հայկական ավանդական արժեքներին «ոչ հարիր» բարքերի ներմուծմանը:[31]



Ֆեմ գրադարան

Լրատվամիջոցներից մեկով լուրեր են տարածվել, թե Երևանում գործում է գրադարան-հավաքատեղի ԼԳԲՏ անձանց և ֆեմինիստների համար:[32] Նշվել է, թե գրադարանը հիմնականում ԼԳԲՏ անձանց հավաքատեղի է և թե այնտեղ «ավանդական» սեռական կողմնորոշում ունեցող, պահպանողական, ոչ լիբերալ հայացքներ ունեցող անձանց մուտքը չի թույլատրվում: Հրապարակվել են լուսանկարներ, որոնցով թիրախավորվել են անձինք:



«Հուզանք ու զանգ» ներկայացում

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից դրամաշնորհի ստացած մի խումբ արվեստագետներ Երևանի մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանի տարածքում բեմադրել են «Հուզանք ու զանգ» ներկայացումը: Ներկայացումը, ըստ հեղինակների, ժամանակակից պարի ու պոեզիայի ռիթմերի սինթեզ է, 1920-ական թվականների ֆուտուրիստական պոեզիայի՝ Չարենցի, Գևորգ Աբովի, Ազատ Վշտունու ստեղծագործությունների էքսպերիմենտալ վերընթերցում:

Ներկայացման նախորդ օրը մի խումբ անձինք, որոնք հայտնի են ԼԳԲՏ անձանց դեմ բողոքի միջոցառումներ իրականացնելով, կոչ են արել հավաքվել և թույլ չտալ, որպեսզի ներկայացումը կայանա: Նրանք, մասնավորապես, հիմնավորել են, որ ներկայացումը «սատանայական» է և նորից կապել են ԼԳԲՏ անձանց, «ոչ ավանդական սեռական կողմնորոշման քարոզի» հետ: Ներկայացման ընթացքում հավաքված անձինք խոչընդոտել են հավաքի ընթացքը, նրանցից մեկը «զեյրոնկա» է նետել արվեստագետներից մեկի ուղղությամբ, ինչից հետո

ոստիկանության ծառայողների կողմից բերման է ենթարկվել:[33] Վիրավորական, ատելություն և թշնամանք սերմանող խոսք է տարածվել նաև սոցիալական ցանցերում, ոմանք մեղադրել են նախարարությանը «այլասերվածություն» ֆինանսավորելու մեջ: Ներկայացումը, այնուամենայնիվ, հասցվել է ավարտին: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը հրապարակել է հանձնաժողովի անդամների անունները, որոնք որոշում են կայացրել դրամաշնորհը նշյալ ներկայացմանը տրամադրելու համար: Հանձնաժողովի անդամներից ոմանք լրատվամիջոցներին հայտնել են, թե տեղյակ չեն եղել, թե ինչ տեսքով է բեմադրվելու ներկայացումը:



«Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստանի» դեմ արշավ

«Վետո» նախաձեռնությունը տևական արշավ է իրականացրել «Բաց հասարակության հիմնադրամների» դեմ՝ նրանց կոչելով վիրավորական արտահայտություններով՝ նրանց գործունեությունը որակելով որպես «պետություն քանդել», «պղծություն և այլասերվածություն քարոզել» և այլն:

Նախաձեռնությունը շուրջ երկու տասնյակից ավել օր ցույց է իրականացրել հիմնադրամի գրասենյակի առջև՝ փորձելով կապ հաստատել գրասենյակի աշխատակիցների և այցելուների հետ: Ցույցի մասնակիցները, մասնավորապես, այցելուներին հարցեր են ուղղել կապված իրենց ստացած դրամաշնորհների հետ: Միևնույն ժամանակ նախաձեռնության անդամները ելույթներ են ունեցել՝ կրկին հիմնադրամների գործունեությունը կապելով «այլասերվածության քարոզի» ու ԼԳԲՏ անձանց հետ: Նրանք անդրադարձել են նաև ԼԳԲՏ ակտիվիստներից մեկին անձամբ՝ վիրավորական արտահայտություններ և զրպարտություն տարածելով նրա հանդեպ:* «Բաց հասարակության հիմնադրամները» հայտարարություն է տարածել՝ իրավապահ մարմիններին ու Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին կոչ անելով պատշաճ գնահատական տալ կատարվածին և ձեռնարկել ժողովրդավարական և իրավական պետության պահանջներից բխող գործողություններ՝ ՀՀ քաղաքացիների իրավունքները, պատիվը և արժանապատվությունը վերականգնելու համար:** Իրավապահ մարմինների կողմից որևէ արձագանք չի ստացվել:

* «Վեսոո» նախաձեռնության բողոքի ակցիա Բաց հասարակության հիմնադրամների գրասենյակի առջև. <https://youtu.be/9F9jxSo8a1o>

** «Բաց հասարակության հիմնադրամները» իրավապահներին կոչ է անում գործողություններ ձեռնարկել «Վեսոո» շարժման դեմ. <https://bit.ly/348PEok>

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

7

Ըստ Էուրոյան խտրական օրենսդրական Նախաձեռնություններ

16.05.2019թ-ին ԱԺ ԲՀԿ խմբակցության պատգամավորների կողմից առաջարկվել է քրեականացնել տասնվեց տարին չլրացած անձանց շրջանում «ոչ ավանդական սեռական կողմնորոշման» քարոզը:[34]

ՀՀ Կառավարության կողմից նախագիծը հավանության չի արժանացել՝ հիմնավորմամբ, որ երեխաների պաշտպանությունը կարող է իրականացվել արդեն իսկ գործող հանցակազմերով և նոր հանցակազմի կարիք չկա:

12.11.2019թ. Ազգային ժողովում քննարկվել է ԱԺ մի շարք պատգամավորների կողմից ներկայացված ՀՀ «Ընտանեկան օրենսգրքում» լրացում կատարելու մասին նախագծերը յոթերորդ գումարման Ազգային ժողովի երրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու հարցը:

Նախագծերից մեկով, մասնավորապես, առաջարկվել է լրացում կատարել Ընտանեկան օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասում, որը նախատեսում է երեխա որդեգրել ցանկացող անձանց համար երեխա որդեգրելու իրավունքը սահմանափակող հանգամանքների ցանկը, ավելացնելով.

- այն անձանց, ովքեր ամուսնացած են նույն սեռի ներկայացուցիչների հետ՝ նման ամուսնություն թույլատրող պետության օրենսդրությանը համապատասխան,
- սեռը փոխած անձի:

Նշյալ լրացումը հիմնավորելու համար բերված են փաստարկներ ինչպիսիք են.
« ...

Ընտանիքն ամբողջական է, երբ այնտեղ ապրում են երկու ծնողներ՝ հայր և մայր, որոնցից յուրաքանչյուրը Հայ ընտանիքում իրենց առանձնահատուկ դերն ունի: Մանկատան պատերի ներսում կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխան չի կարող իրեն լիարժեք և առողջ զգալ մի միջավայրում, որտեղ չի հասկանա թե ով է իր մայրը, և ով՝ հայրը:

... անհրաժեշտություն է առաջանում հասկանալ, թե ինչպես կարող է երեխան ապրել նույն սեռի ամուսինների հետ: Նման ոչ լիարժեքության մեջ ապրելով՝ երեխաները կարող են ձեռք բերել հոգեկան խանգարումներ՝ չկարողանալով արտահայտել իրենց ներքին զգացմունքները: ՀԱՅ հասարակության մեջ այդ երևույթն ավելի խոցելի կդառնա, քանի որ մեր պատմությանը հետադարձ հայացք զգելով՝ չենք կարող նմանօրինակ ընտանիքների հանդիպել:

...»[35]

Հաջորդ նախագծով առաջարկվում է Ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածով նախատեսված ամուսնության գրանցումն արգելող հանգամանքների շարքում ավելացնել ամուսնության արգելումը նույն սեռի անձանց միջև, ինչպես նաև այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկը փոխել է սեռը:

Այս նախագծի անհրաժեշտության հիմնավորումներում հեղինակը նշել է.

« ... Առավել ևս, այն պարագայում, երբ Հայաստանի Հանրապետությունը շարունակում է մնալ պատերազմական իրավիճակում, աներկբայորեն անհրաժեշտ են գործուն քայլեր մեր բնակչության բնականոն վերարտադրությանը խոչընդոտող երևույթները կանխարգելելու ուղղությամբ:

...

Ո՛չ ՀՀ Սահմանադրությունը, ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները չեն սահմանում նույն սեռի անձանց միության (ամուսնության գրանցման) համար իրավական նախադրյալներ ապահովելու՝ պետությանը պարտավորեցնող պահանջներ: Այսինքն՝ Հայաստանը չունի իր տարածքում նույնասեռականների կամ սեռափոխված անձանց ամուսնությունը թույլատրելու իրավական պարտավորություն: Ավելին՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 23-րդ հոդվածի 2-րդ մասը նշում է, որ «ամուսնության տարիքի հասած տղամարդկանց և կանանց համար ճանաչվում է ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը»: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի 12.1 կետի համաձայն՝ «ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան»:

Այս դրույթը յուրաքանչյուր պետությանը հնարավորություն է տալիս ամուսնական հարաբերությունները կարգավորել ազգային և մշակութային արժեքների համապատասխան: Ելնելով մեր երկրի առանձնահատկություններից՝ պետությունը պետք է կատարի Սահմանադրությամբ ամրագրված՝ պետական քաղաքականության հիմնական նպատակները, որոնցից ամենաառաջնայինը՝ «երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն» է:[36]

Նախագծերի՝ ԱԺ օրակարգում ընդգրկելը մերժվել է քվեարկությամբ: Մինևույն ժամանակ քննարկումը զուգորդվել է թե՛ բանավեճով իշխող «Իմ քայլը» խմբակցության պատգամավորների և նախագծի հեղինակ Գևորգ Պետրոսյանի միջև: Մարիա Կարապետյանը, մասնավորապես, նշեց, թե եթե «ոչ ավանդական սեռական կողմնորոշման քարոզը» քրեականացվի, ապա առաջինը պատասխանատվության պետք է ենթարկվի Գևորգ Պետրոսյանը, քանի որ հենց նա է ամենաշատը խոսում այդ թեմայի շուրջ և «քարոզում»: Քրիստինե Պողոսյանն էլ ասաց, թե ըստ հոգեբանների հոմոֆոբիան վառ արտահայտված է այն մարդկանց մոտ, որոնք թաքնված նույնասեռականներ են: Գևորգ Պետրոսյանը քվեարկությունից առաջ իր ելույթում հարց հնչեցրեց, թե այն պատգամավորները, որոնք դեմ են քվեարկելու նախագծին, արդյոք կուզենային իրենց ընտանիքում նման «երևույթ» տեսնել: ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանը այս արտահայտության համար Գևորգ Պետրոսյանին հորդորեց հետևել արտահայտություններին:[37]

Հարկ է նշել, որ «ոչ ավանդական սեռական կողմնորոշման» քարոզչությունն

արգելելու նախագծերով «Հանրապետական» և «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունները հանդես էին եկել նաև 2018թ-ին, սակայն, նախագծերը Կառավարության հավանությանը չէին արժանացել՝ հիմնավորմամբ, որ նախագծում օգտագործված հասկացությունները հստակ չեն, կարող են հանգեցնել օրենքի ոչ որոշակիության:

Նախագծերը խնդրահարույց են ոչ միայն իրենց բովանդակության՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխանության առումով, քանի որ պարունակում է իրավական որոշակիության սկզբունքին չհամապատասխանող «ոչ ավանդական» եզրույթը, այլ նաև ստեղծում են իրական ռիսկեր պետության կողմից մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և դրանց իրացման պատշաճ ապահովման նկատմամբ: Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայում և Մոլդովայի հանրապետությունում գործող նույնաբովանդակ օրենսդրական կարգավորումների համատեքստում քննարկելով այսպես կոչված «հոմոսեքսուալության պրոպագանդայի» արգելքը՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) անդրադարձել է դրանց՝ ժողովրդավարական սկզբունքներին և մարդու իրավունքներին համապատասխանության հարցին՝ դա համարելով արտահայտման ազատության և հավաքների ազատության սահմանափակում:[38]

Օրենսդրական նախագծերի վերաբերյալ «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի իրավական դիրքորոշումը առավել մանրամասն ներկայացվել է «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում 2018թ-ին» զեկույցում:[39]

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8

Շրջանառության մեջ է դրվել ՀՀ Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագիծ, որով առաջարկվել է քրեականացնել բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը:^[40] Իրավապաշտպանների կողմից առաջարկվել է որոշակիացնել առաջարկվող հոդվածի բովանդակությունը՝ տարընթերցումներից խուսափելու և անձանց խոսքի ազատության սահմանափակումների չարաշահում թույլ չտալու նպատակով: Նախագիծը դեռևս լրամշակման փուլում է:

2019թ-ի նոյեմբերին շրջանառության մեջ դրվեց քրեական օրենսգրքի նախագիծը, որի 201-րդ հոդվածով նախատեսվում է քրեական պատիժ խտրականության համար: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը ուղղակիորեն հոդվածի նախագծում ամրագրված չէ, սակայն նշված է, որ խտրականությունն արգելվում է «անձնական և սոցիալական բնույթի այլ հատկանիշներով» և: Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման «իդրաֆթ» առցանց հարթակում առաջարկվել է հստակ ամրագրել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքը՝ որպես երկրում առավել տարածված խնդիր: Որպես հիմնավորում ներկայացվել են ոչ միայն իրավիճակի վերաբերյալ փաստագրված տվյալները, այլ նաև միջազգային մարմինների կողմից Հայաստանին ներկայացված առաջարկներն ու ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունները: Արդարադատության նախարարությունը մերժել է առաջարկը, նշելով, որ խտրականության հիմքերի ցանկը սպառնիչ թվարկված չէ և «անձնական և սոցիալական բնույթի այլ հատկանիշներ» ձևակերպումը ներառում է նաև սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը:^[41]

Նշենք, որ 2017թ-ին հանրային քննարկման դրված նախագծում խտրականության արգելքի վերաբերյալ հոդվածում սեռական կողմնորոշումը ևս նշված էր որպես խտրականությունից պաշտպանված հատկանիշ:

Նախագծի 72-րդ հոդվածը, որը նախատեսում է պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ, վերաձևակերպվել է հետևյալ խմբագրությամբ՝ «հանցանքը գաղափարախոսական, ազգային, էթնիկական, ռասսայական, սոցիալական կամ կրոնական ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով կատարելը»: Հարկ է նկատել, որ ավելացվել է «սոցիալական ատելության» հիմքը, որը հստակ չէ և կարող է տալ տարընթերցման տեղիք: Այնուամենայնիվ, նախագծի հանրային քննարկումների ընթացքում նախագիծը մշակող խմբի կողմից մեկնաբանվել է, որ սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ

պայմանավորված ատելության շարժառիթը տեղավորվում է այս հասկացության իմաստում: Նույն մեկնաբանությունն է տրվել նաև Արդարադատության նախարարության կողմից իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման առցանց քննարկման «Իդրաֆթ» համակարգում ներկայացված առաջարկին ի պատասխան:[42]

Նախագծի 315-րդ հոդվածը, որը նախատեսում է քրեական պատասխանատվություն թշնամանք, ատելություն կամ անհանդուրժողականություն տարածելու համար, ևս վերախմբագրված է՝ հետևյալ ձևակերպմամբ. « Ազգային, Էթնիկական, ռասսայական, քաղաքական, գաղափարախոսական կամ կրոնական թշնամանք, ատելություն կամ անհանդուրժողականություն, ինչպես նաև այլ սոցիալական խմբի նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հարուցելուն ուղղված արարքը»: Հարկ է նկատել, որ նախագծում ավելացվել է «այլ սոցիալական խմբի նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք» հարուցելուն ուղղված արարքի համար նախատեսված պատասխանատվությունը: Մեկնաբանման նման լայն հնարավորություն տվող ձևակերպումը, իհարկե, ներառում է նույնասեռական և տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելություն հարուցելը, սակայն, մինևույն ժամանակ, կարող է թույլ տալ իրավակիրառ մարմիններին, հոդվածին տալ նեղ մեկնաբանություն և այն չկիրառել LAFS անձանց ուղղված ատելության խոսքի պարագայում: «Իդրաֆթ» համակարգում նախագծին ներկայացված առաջարկին առ այն, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը պետք է հստակ ամրագրվեն, որպես առավել տարածված ատելության խոսքի հիմք, Արդարադատության նախարարությունը պատասխանել է, որ «այլ սոցիալական խումբ» ձևակերպումը ներառում է այդ հիմքերը:[43]

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

9

2019թ-ի ընթացքում Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ քննարկվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022թթ գործողությունների պլանը: Քննարկումների առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ քաղաքացիական հասարակության քննարկմանն էր ներկայացվել ոչ թե արդեն իսկ պատրաստ ռազմավարության և գործողությունների պլանի նախագիծ, այլ հրավիրվել էր քննարկում լսելու համար մարդու իրավունքների պաշտպանության տարբեր ոլորտներում առկա խնդիրներն ու լուծման առաջարկները:

Քննարկումներից հետո քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին առաջարկվել է բարձրաձայնված խնդիրների վերաբերյալ առաջարկներն ու հիմնավորումները գրավոր տրամադրել նախարարությանը:

Այնուհետև հրապարակվել է Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող գործողությունների պլանի նախագիծն ու դրանից բխող 2020-2022թթ-ների գործողությունների պլանը: Հատկանշական է, որ դրանում տեղ է գտել ատելության խոսքի արգելքի օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությունը: Չնայած նրան, որ «Փիլքի» կողմից ներկայացվել է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը՝ որպես Հայաստանում լայնորեն տարածված խնդիր և հիմնավորվել է իրավակարգավորումների անհրաժեշտությունը, գործողությունների պլանում խտրականության դեմ օրենքի ընդունումը ամրագրվել է որպես ցանկացած հիմքով խտրականության դեմ միջոց:

2019թ-ի ընթացքում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքը հասել է աննախադեպ մակարդակի: Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի հեղինակները ոչ միայն մասնավոր անձինք են, այլ նաև պետական մարմինների ներկայացուցիչներ, ում խոսքը ունի շատ ավելի լայն տարածում զանգվածային լրատվության միջոցներով: Որոշ պատգամավորների կողմից առաջ են քաշվել օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնք իրենց բնույթով խտրական են և կարող են ոտնահարել ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքները: Նախագծերը, սակայն, բացասական արձագանքի են արժանացել իշխող կուսակցության կողմից: Նախագծերի քննարկումները, սակայն հեռարձակվել են առցանց և զուգորդվել վիրավորական, արժանապատվությունը նվաստացնող, անհանդուրժողականություն և թշնամանք սերմանող արտահայտություններով: Պատգամավորների կողմից հնչած որոշ արտահայտություններ պարունակել են բռնության կոչեր, սակայն որևէ իրավական գնահատականի չեն արժանացել:

Միևնույն ժամանակ լրատվամիջոցներով և տարբեր բողոքի ակցիաների ընթացքում որոշ խմբեր և նախաձեռնություններ շահարկել են կեղծ տեղեկություններ՝ ԼԳԲՏ անձանց հետ կապելով պետության կողմից ֆինանսավորում ստացած միջոցառումներ կամ պետության պարտավորությունների շրջանակներում իրականացվող գործառույթներ: Չնայած նրան, որ հավաքները զուգորդվել են բռնության և խտրականության կոչերով, դրանց մասնակցել են զինված անձինք, իրավապահների կողմից որևէ քայլ չի ձեռնարկվել դադարեցնելու համար անհանդուրժողականություն և թշնամանք սերմանող միջոցառումները: ԼԳԲՏ անձանց հետ արհեստականորեն կապված Ստամբուլյան կոնվենցիայի դեմ իրականացվող ստորագրահավաքի կազմակերպիչները ագրեսիվ վարք են դրսևորել անցորդների նկատմամբ, որոնք հրաժարվել են ստորագրել:

Կրկին շրջանառության մեջ են դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի և խտրականության, ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանքը հրահրելուն ուղղված գործողությունների և արարքը ատելության, անհանդուրժողականության շարժառիթով կատարված լինելը՝ որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք նախատեսող Քրեական օրենսգրքի նախագծերը: Այնուամենայնիվ, դրանցում սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը որպես պաշտպանված հատկանիշ հատուկ ամրագրում չեն ստացել:

Այնուամենայնիվ, պետությունը սկսում է իրականացնել քայլեր՝ մարդու իրավունքների սկզբունքներին հակասող օրինագծերի մերժմամբ, ինչպես նաև՝ ատելության խոսքի կանխման ուղղությամբ համակարգային փոփոխություններ նախաձեռնելով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին

- Համագործակցել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ ստանալու համար առավել մանրակրկիտ տեղեկություն ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների համակարգային բնույթ կրող ասպեկտների մասին
- Հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեռական կողմնորոշման կամ գեղեցիկության ինքնության հիմքով խտրականությունն ու բռնությունը կանխելու ուղղությամբ քայլեր նախատեսել՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների պլանում:
- ԼԳԲՏ մարդու իրավունքների ոտնահարումներին անդրադառնալիս տալ հստակ գնահատականներ, չխուսափել մարդու իրավունքների ոտնահարումները դատապարտելուց:
- Իրականացնել մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի, միջազգային իրավական փորձի համապարփակ ուսումնասիրություն և երկրում առկա իրավիճակի վերլուծություն՝ նախատեսելու համար ատելության խոսքի՝ մարդու իրավունքների սկզբունքներին համապատասխան և գործուն իրավակարգավորումներ:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի արգելքը:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը կանխելու, իսկ տեղի ունեցած դեպքերում՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկելու առիթով:
- Ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների առիթով՝ բացառելով քննություն իրականացնող մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական, կանխակալ վերաբերմունքը:
- Ձեռնարկել համապատասխան միջոցներ փակ հաստատություններում ԼԳԲՏ անձանց անվտանգությունն ապահովելու, դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը կանխելու, իսկ նման դեպքերում՝ պատշաճ քննություն իրականացնելու համար: Խնդիրը վերացնելու համար չխուսափել իրավապաշտպան կազմակերպությունների հետ համագործակցությունից:
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գեղեցիկության ինքնության հիմքով:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես նախատեսել անձի նկատմամբ սեռական

կողմնորոշման և/կամ գեղեցիկի ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

- Մշակել և կիրառել մեխանիզմներ սեռական կողմնորոշման և գեղեցիկի ինքնության հիմքով կատարված հանցագործությունների ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման համար, ներառյալ հանցագործության շարժառիթի բացահայտմանն ուղղված համապատասխան իրավական և ընթացակարգային մեխանիզմների մշակումը:
- Խրախուսել ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց, ինչպես նաև ականատեսներին հաղորդել կատարված հանցագործությունների վերաբերյալ տվյալներ:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ անձի սեռական կողմնորոշման և գեղեցիկի ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:
- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Կազմակերպել և իրականացնել դասընթացներ իրավակիրառ մարմինների հետ՝ ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց և վկաների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների ծառայողների, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով:

Ձանգվածային լրատվության միջոցներին

- Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ գերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:

- Չտարածել պաշտոնատար անձանց և այլ գործիչների կողմից հնչած ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք, բռնության կամ խտրականության կոչ կամ արդարացում պարունակող խոսքը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության, և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:
- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն Հավասարության մասին արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:
- ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների հայտնի դեպքերում հանդես գալ հրապարակային դատապարտող հայտարարությամբ, պատշաճ արձագանքել ահազանգերին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փինք Արմենիան 2012թ.-ից ի վեր վարել է ռազմավարական դատավարություններ,[44] որոնց նպատակն է հասնել փոփոխությունների ինչպես օրենսդրական դաշտում, այնպես էլ հանրային քաղաքականության մեջ:

Սույն հավելվածում ամփոփված են նախկինում մեկնարկած ռազմավարական դատավարությունների զարգացումները 2019 թ-ի ընթացքում:

Դրանցից երեքը գտնվում են ներպետական դատական ատյանների վարույթում:

Երկուսը վերաբերում են Փինք Արմենիայի կողմից 2017թ-ին հրապարակված սոցիալական գովազդների պաստառների շուրջ ծագած վեճերին՝ հետևյալ փաստերով՝

Փինք Արմենիան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի

Փինք Արմենիայի և Նուշիկյան ասոցիացիայի միջև կնքված պայմանագրի հիման վրա 25.05.2017թ-ին վերջինին պատկանող վահանակների վրա տեղադրվել էին սոցիալական գովազդ հանդիսացող պաստառներ: Պաստառներից մեկում պատկերված է երկու նույնասեռական տղամարդ կերպարանավորող անձանց գրկախառնություն, որտեղ գրված է. «Դու ուզում ես, որ բոլորը երջանիկ լինեն, ուրեմն մաղթիր մեզ երջանկություն»: Մյուս պաստառը տարբեր մասնագիտություններ ունեցող մարդկանց կողաժ է ու գրված է. «Դուք հանդիպում եք նրանց ամեն օր»: Եվ երրորդում պատկերված են երեք ձեռքեր, իսկ պաստառին գրված է. «Տրանս անձինք մեր հասարակության մասն են»: 27.05.2017թ. գովազդային պաստառները ապամոնտաժվել, պատռվել և նետվել են աղբարկղը՝ առանց Կազմակերպությանը տեղյակ պահելու:[45]



Պաստառների հեռացումից մի քանի ժամ անց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչության պետ Արազ Բաղդասարյանը իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է հետևյալ գրառումը. «Մայրաքաղաքում ապօրինի տեղադրվել է 3 գովազդային պաստառ, որոնք հանդուրժողականություն են քարոզում սեռական տարբեր կողմնորոշում ունեցող մարդկանց նկատմամբ...անկախ գովազդի բովանդակությունից այդ պաստառներն այժմ ապամոնտաժվել են, քանի որ Երևանի քաղաքապետարանը դրանց տեղադրման համար թույլտվություն չի տրամադրել»:

Փինք Արմենիայի կողմից վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում Երևանի քաղաքապետարանի՝ գովազդային վահանակների թվով երեք պաստառները հեռացնելուն ուղղված գործողությունները խոսքի ազատության, խտրականությունից զերծ մնալու իրավունքներին միջամտող, ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով:

Գործի դատաքննության ավարտից հետո վարչական դատարանը որոշում է կայացրել գործի վարույթը կարճելու մասին՝ գործը դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով: Որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան:

Փինք Արմենիան ընդդեմ Մշակույթի նախարարության

2017թ-ին վերոնշյալ գովազդային պաստառները ներկայացվել են ՀՀ Մշակույթի նախարարությանը՝ սոցիալական գովազդ ճանաչելու պահանջով: Պաստառների ճանաչումը սոցիալական գովազդ հնարավորություն կտար օգտվել սոցիալական գովազդի համար նախատեսված հնարավորություններից, այն է՝ դրանց անվճար տեղադրումը գովազդային վահանակների վրա, դրանց համար պարբերաբար տրամադրվող վահանակներից օգտվելու հնարավորություն և այլն:

Մշակույթի նախարարությունը մերժել է Փինք Արմենիայի դիմումը՝ հիմնավորմամբ, որ ներկայացված գովազդները որևէ հանրային կարևորության խնդրի չեն անդրադառնում և սոցիալական իրազեկման տարր չեն պարունակում, բացի այդ, ժողովուրդը հեռուստահաղորդումներից ծանոթ է «ոչ ավանդական սեռական կողմնորոշում» ունեցող մարդկանց գոյության մասին, հետևաբար դրանց տարածման անհրաժեշտությունը չկա:[46]

Փինք Արմենիայի կողմից ներկայացվել է հայցադիմում վարչական դատարան՝ ՀՀ մշակույթի նախարարության կողմից դիմումը մերժելու մասին վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու և նախարարությանը սոցիալական գովազդները սոցիալական ճանաչելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջով:

Հայցադիմումը մերժվել է առաջին ատյանի վարչական դատարանի կողմից: Որոշումը բողոքարկվել է վերաքննիչ դատարան: 2019թ-ի Հոկտեմբերի 22-ն կայացել է առաջին նիստը վարչական վերաքննիչ դատարանում: Պատասխանողի ներկայացուցիչը միջևորդել է որպես իրավահաջորդ ներգրավել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարարությանը, նիստը հետաձգվել է: Հաջորդ նիստը նշանակվել է 2020թ-ի փետրվարի 27-ին:

Շուռնուխ գյուղում տեղի ունեցած բռնության դեպքը

2018թ. օգոստոսի 3-ին ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում հանգստացող 9 երիտասարդներ, այդ թվում ԼԳԲՏ ակտիվիստներ, ծեծի և հոգեբանական բռնության են ենթարկվել նույն գյուղի և Գորիս քաղաքի ավելի քան 20 բնակիչների կողմից, որոնք տուժողներից պահանջել են հեռանալ գյուղից, հարվածել են նրանց քարերով, ձեռքերով ու ոտքերով: Բռնության առնչությամբ քրեական գործ է հարուցվել միայն ծեծի հոդվածով, և որևէ անձ չի ներգրավվել որպես մեղադրյալ: Ցուցմունքներով իրենց մեղքն ընդունած անձանց նկատմամբ կիրառվել է համաներում և քրեական գործի վարույթը կարճվել է: Այլ անձանց նկատմամբ ընդհանրապես քրեական հետապնդում չի իրականացվել, քանի որ վարույթն իրականացնող մարմինը գտել է, որ նրանց գործողություններում հանցակազմ առկա չէ:

2019թ. դեկտեմբերին քրեական գործով վարույթը կարճելու որոշումը տուժող կողմի բողոքի հիման վրա վերացվել է, քրեական գործի վարույթը վերսկսվել է: Այլ անձանց նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու որոշումների դեմ բերված բողոքները գտնում են դեռևս քննության փուլում:



Ռազմավարական նշանակություն ունեցող գործերից երեքը գտնվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վարույթում և արդեն իսկ կոմունիկացվել են ՀՀ Կառավարության հետ:

Միևսայանը և այլք ընդդեմ Հայաստանի

2014թ. իրավունք թերթը «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամուլ լրբեհնգի շահերը. ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» հոդվածում հրապարակել էր Ֆեյսբուքի 60 օգտատերերի հղումները՝ կոչ անելով նրանց հանդեպ անհանդուրժող լինել, աշխատանքից հեռացնել կամ չընդունել, չշփվել նրանց հետ: Սև ցուցակը թերթը կազմել էր «Ազատություն» ռադիոկայանի

Ֆեյսբուքյան ասուլիսում երգչուհիներ Ինգա և Անուշ Արշակյաններին քննադատական հարցեր ուղղած անձանց հիման վրա: Մինչ այդ Անուշ Արշակյանը, լինելով Եվրատեսիլ մրցույթի միջազգային ժյուրի, Ավստրիայի ներկայացուցիչ, մրցույթի հաղթող, կանացի կերպարանքով, բայց մորուքով և նույնասեռական Կոնչիտա Վուրստի մասին «Առավոտ» թերթին տված հարցազրույցում ասել էր, որ զգվում է նրանից ու նրա հանդեպ այնպիսի հակակրանք ունի, ինչպիսին հոգեկան հիվանդների նկատմամբ ունի:[47]

«Իրավունքի» հոդվածում հայտնված անձանցից 16-ը դիմել էին դատարան: Սակայն, Հայաստանում բոլոր ատյաններում պարտվելուց հետո, այն պատճառաբանությամբ, որ թերթը օգտվել է իր խոսքի ազատության իրավունքից, հայցվորներից 14-ը 2015թ-ին դիմել են ՄԻԵԴ:[48]

2018թ-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոմունիկացրել է Մինասյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործը՝ ՀՀ կառավարությանն ուղղվելով հետևյալ հարցերը՝

1. Արդյոք եղե՞լ է հայցվորների «մասնավոր ընտանեկան կյանքը հարգելու» իրավունքի խախտում հակառակ Կոնվենցիայի 8-րդ հոդվածին:
2. Արդյոք հայցվորները խտրականության զոհ են դարձե՞լ՝ հակառակ Կոնվենցիայի 14-րդ հոդվածին:
3. Արդյոք այս դեպքում պետության գործողությունները կամ անգործությունը միտվա՞ծ է եղել Կոնվենցիայով նախատեսված իրավունքներից և ազատություններից որևէ մեկի վերացմանը կամ սահմանափակմանը՝ ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով՝ 17-րդ հոդվածի իմաստով:[49]

Նշենք, որ 17-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ դիրքորոշումը կարևոր դերակատարություն կունենա ոչ միայն սույն գործի համար կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումների զարգացման տեսանկյունից, այլ նաև առհասարակ Եվրոպայում իրավունքի զարգացման առումով, քանի որ դրանով անդրադարձ է արվելու որպես արտահայտման ազատության սահմանափակում ատելության խոսքի արգելքի իրավաչափության սահմանների:

Օգանեզովան ընդդեմ Հայաստանի

2012թ-ին «Դի Այ Ռիայ» ակումբի վրա տեղի ունեցավ հարձակում, ակումբը պայթեցվեց մի խումբ անձանց կողմից: Պայթյունի կազմակերպումը, ինչպես ի սկզբանե խոստովանել էին ամբաստանյալները, պայմանավորված է եղել Օգանեզովայի լեսբի լինելու, Ստամբուլ քաղաքում գեյ շքերթի մասնակցելու, ինչպես նաև ակումբի՝ ԼԳԲՏ անձանց հավաքատեղի լինելու հայտնի հանգամանքների հետ: Այս մասին է վկայում փաստն առ այն, որ պայթյունից որոշ ժամանակ առաջ ակումբ են ներխուժել անձինք՝ փորձելով հետապնդել ու ահաբեկել այնտեղ հավաքված անձանց: Արդյունքում ԼԳԲՏ համայնքի շատ ներկայացուցիչներ և համակիրներ սկսել են վախենալ ակումբում իրենց նկատմամբ հոմոֆոբ խմբերի հնարավոր հարձակումներից: Դեպքին հաջորդեց ակումբի սեփականատիրոջ նկատմամբ հետապնդումները, սպառնալիքները:

Հարուցվեց քրեական գործ՝ գույքին վնաս պատճառելու հանցակազմով, ինչը, սակայն, ամբողջ ծավալով չէր արտահայտում հանցագործության էությունը, ծանրությունը՝ պայմանավորված դրա շարժառիթով:

Կալանավորված անձանց նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխվել է «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության պատգամավորի կողմից ներկայացված գրավի դիմաց:

Առաջին ատյանի դատարանի վճռով ամբաստանյալները դատապարտվել են երկու տարվա ազատազրկման, սակայն կիրառվել է պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ դրույթը և նրանք ազատ են արձակվել: Վերաքննիչ դատարանը վճիռը թողել է անփոփոխ, իսկ վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ չի ընդունել:



Ակումբի սեփականատերը դիմել է Եվրոպական դատարան: 2019թ-ի մայիսի 17-ին Դատարանի կողմից դեպքը կոմունիկացվել է:

ՀՀ Կառավարությունը ՄԻԵԴ պահանջով պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝

1. Արդյո՞ք 2012թ-ի մայիսի 8-ի հարձակումը և դրան հաջորդող իրադարձությունները, ներառյալ՝ ենթադրյալ սպառնալիքները, նվաստացումներն ու հետապնդումները հանգեցրել են Դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունքի և նրա մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի հանդեպ միջամտության՝ Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների խախտմամբ:
2. Հաշվի առնելով Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածներից բխող պոզիտիվ պարտավորությունները՝ արդյո՞ք 2012թ-ի մայիսի 8-ի հարձակումը և Դիմումատուի կողմից ներկայացված հետագա վատ վերաբերմունքի և հետապնդումների վերաբերյալ բողոքների քննությունը եղել է նշյալ դրույթների նպատակներին համապատասխան, ներառյալ՝ իրավախախտների արարքում խտրական շարժառիթի բացահայտման ուղղությամբ:
3. Արդյո՞ք Դիմումատուն տնօրինել է Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների ներքո բողոքարկման արդյունավետ միջոցների՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջների համաձայն:
4. Արդյո՞ք Դիմումատուն Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածներին համընթաց ենթարկվել է խտրականության իր սեռական կողմնորոշման հիմքով՝ ի հակադրություն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի:

ՀՂՈՒՄՆԵՐ

- [1] Հոդված 26, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ., <https://www.president.am/hy/constitution-2015/>
- [2] Հոդված 1, «Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ» ՄԱԿ-ի 1984թ. կոնվենցիա <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60506>
- [3] Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 2346/02 վճիռ, §4,
- [4] Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 33394/96 վճիռ, Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 13134/87 ՄԻԵԴ վճիռ, §30
- [5] Այդինս ընդդեմ Թուրքիայի Թիվ 23178/94 ՄԻԵԴ վճիռ
- [6] Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ ՄԻԵԴ 4715/70, 4783/71 և 4827/71 գործերով
- [7] Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 33985/96 և 33986/96 գործեր
- [8] Փիրսն ընդդեմ Հունաստանի Թիվ 28524/95 ՄԻԵԴ վճիռ, ինչպես նաև Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001թ. զեկույց փաստաթուղթ
- [9] Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.
- [10] Հոդված 16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966թ. միջազգային դաշնագիր
- [11] Տես 35 հոդվածներ 16 և 17, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16
- [12] Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ Թիվ 2346/02 վճիռ, §49
- [13] Կ.Բ. ընդդեմ Թուրքիայի Թիվ 24209/94 ՄԻԵԴ վճիռ
- [14] Քոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 66746/01 ՄԻԵԴ վճիռ
- [15] «Կիսաբաց Լուսամուտներ» հաղորդաշարի 02.09.19թ-ի եթեր. <https://youtu.be/FXuUOMRc6RM>
- [16] Հոդված 57, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ., <https://www.president.am/hy/constitution-2015/>
- [17] Հոդված 44, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ., <https://www.president.am/hy/constitution-2015/>
- [18] Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե, Հանձնարարական թիվ 97(20), 1997թ. <https://bit.ly/2wa4QoE>
- [19] Միացյալ Ազգերի Կազմակերպության Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ. <https://www.ohchr.org/Documents/ProfessionalInterest/ccpr.pdf>

[20] Համապատասխան օրենսդրական կարգավորումները հետևյալ հղումներով
<https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/C-46/section-318.html>

https://www.government.is/library/Files/General_Penal_Code_sept.-2015.pdf

<http://www.legislation.gov.uk/ukpga/2003/44/section/146>

<http://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1889/en18890039.pdf>

<https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070719&dateTexte=20181010>

https://wetten.overheid.nl/BWBR0001854/2018-09-19#BoekTweede_TiteldeelV_Artikel137c

[21] Միացյալ ազգերի կազմակերպություն, Մարդու իրավունքների խորհուրդ, Մարդու իրավունքների հանձնակատարի տարեկան զեկույց, 2013, Ռաբատի գործողությունների պլան՝ ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության ջատագովության արգելքի վերաբերյալ https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf

[22] Տես՝ https://youtu.be/KaWfXaE3_WQ

[23] Տես՝ <https://youtu.be/JQYSbAGkY8>

[24] Տես՝ <https://youtu.be/jNj1iJFBdII>

[25] Տես՝ <https://youtu.be/iNQP6NWs0Fg>

[26] Տես՝ <https://youtu.be/vJoNsplqRgl>

[27] Տես՝ <https://www.azatutyun.am/a/29869980.html>

[28] Տես՝ <https://armeniasputnik.am/society/20191113/21088616/es-shat-gohem-vor-finansavorvele-pashinyany-mel-daluzyani-filmi-masin.html>

[29] Տես՝ <https://www.azatutyun.am/a/29924856.html>

[30] Տես՝ <https://bit.ly/2JvGGYG>

[31] Տես՝ <https://bit.ly/39y5tGe>

[32] Տես՝ <https://bit.ly/3aAYI7M>

[33] Տես՝ <https://bit.ly/39wrRPZ>

[34] ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու նախագիծ. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10461&Reading=0>

[35] ՀՀ Ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագիծ. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10764&Reading=0>

[36] Տես՝ նախորդ հղումը.

[37] Տես՝ https://youtu.be/H5i0xRF61_0

[38] «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի կարծիք, 2013. [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2013\)022-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2013)022-e)

[39] «Փինք» իրավապաշտպան ՀԿ, «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում», տարեկան զեկույց, 2018 https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2019/05/2018annualreview_hy.pdf

[40] ՀՀ Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ. <https://www.e-draft.am/projects/1862/about>

[41] ՀՀ Քրեական օրենսգրքի նախագիծ. <https://www.e-draft.am/projects/2115/digest>

[42] Տես՝ նախորդ հղումը.

[43] Տես՝ նախորդ հղումը.

[44] «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից վարվող ռազմավարական դատավարությունների սեղմագրեր. <http://www.pinkarmenia.org/hy/strategiclitigation/>

[45] Տես՝ <https://bit.ly/2R1JNf4>

[46] Տես՝ <http://www.pinkarmenia.org/hy/2017/12/psa-conclusion/>


[47] Տես՝ <https://www.aravot.am/2014/05/14/460287/>

[48] Միևսայանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործի հակիրճ նկարագրություն. <http://www.pinkarmenia.org/hy/strategiclitigation/caseof16/>

[49] Միևսայանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործը կոմունիկացվել է. <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-181716>

Կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007թ-ին: Կազմակերպությունն իր շահառուներին և հասարակությանն առավել հայտնի է որպես Փինք Արմենիա: Փինքը ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) համայնքահեն կազմակերպություն է, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը ստեղծվել է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:



«Փինք» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

www.pinkarmenia.org
info@pinkarmenia.org
+374 60 377277